

—Մի քիչ օղի տաս, —ասաց նա Կօրաբլեօվային, չապկի
թէքով սրբելով արտասուքը և երբեմն-երբեմն հեծկլատալով:

—Առիւծի կաթ: Ինչու չէ, տուր տեսնենք, ինչ ևս տալիս,
ասաց Կօրաբլեօվան:

XXXII

Մասլօվան հացի մէջից հանեց փողերը ու մի կտրօն տուեց
Կօրաբլեօվային: Կօրաբլեօվան առաւ կտրօնը, նայեց և, թէն
գրագէտ չէր, բայց հաւատաց ամենագէտ Խօրօշավկային, որ
այդ թուղթը արժէ 2 ր. 50 կ., ու ձեռը տարաւ փառարանի
օդանցքը օղիի շիշը հանելու: Այդ տեսնելով, այն կանայք, ու-
րոնք նրա տախտադրացիները չէին, ցրուեցին իրանց տեղերը:
Իսկ Մասլօվան մինչ այդ թափ տուեց փոշին զլիսաշորի ու խա-
լաթի վրայից, բարձրացաւ նստեց տախտի վրայ ու սկսեց ուտել
հետը բերած հացը:

—Ես քեզ համար թէյ եմ պահել, բայց, կարծեմ,
սառել է, —ասաց նրան Ֆեռուսեան, դարակի վրայից վերցնելով
ոտի փաթաթանի մէջ փաթաթած թիթեղէ թէյամանը և գա-
ւաթը:

Խմիչքը բոլորովին սառն էր և աւելի թիթեղի համ էր
տալիս, քան թէյի, բայց Մասլօվան լցրեց գաւաթը ու սկսեց
խմել:

—Ֆինաչկա, առ, —ձայն տուեց նա և հացի մի կտոր կըտ-
րելով տուեց փոքրիկ տղային, որ աչքը նրա բերնից չէր հե-
ռացնում:

Մինչ այդ՝ Կօրաբլեօվան բերեց օղիի շիչն ու գաւաթը:
Մասլօվան հիւրասիրեց Կօրաբլեօվային ու Խօրօշավկային: Այդ
երեք կալանաւորուհիները կազմում էին այդ սենեակի արիստո-
կրատիան, որովհետև փող ունէին և իրար մէջ բաժանում էին
ունեցածները:

Մի քանի բոսէ անցած Մասլօվան կենդանացաւ ու սկսեց
վրայ տալով պատմել դատի մասին, դատախազի ձեն անելով և
առհասարակ ներկայացնելով այն բոլորը, ինչ որ առանձին տը-
պաւորութիւն էր գործել նրա վրայ: Նրա վրայ առանձին տպա-
ւորութիւն էր գործել այն բանը, որ, ինչպէս ինքը զիտել էր,
տղամարդիկ, ուր էլ լինէր ինքը, ընկնում էին իր յետեից: Դա-
տարանում ամենաքը նայում էին իր վրայ, —պատմում էր նա, —
և անդադար դիտմամբ այդ բանի համար մտնում էին կալա-
նաւորների սենեակը:

— Պահապան զինուորն էլ էր ասում,—տես, քեզ մտիկ տալու համար են չարունակ գալիս: Գալիս է, օրինակ, մէկը ու հարցնում, թէ ուր է այս ինչ թուղթը կամ մի ուրիշ այդպիսի բան, բայց լաւ տեսնում եմ, որ ինչ թուղթ, ինչ բան, քիչ է մնում աչքերով ինձ ուտի,—ասում էր Մասլովան, ժպտալով և կարծես տարակուսանքով թափ տալով գլուխը—ի՞նչ պառզներ են:

— Հա, այդպէս են դրանք,—վրայ բերեց պահապանի կիւր ու սկսեց պտպտացնել իր երգեցիկ ձայնով:— Ո՞նց որ ճանձերը հաւաքուեն մեղքի վրայ: Գործ որ լինի, հազար վերստ հեռու կը փախչեն, բայց այդ բանի համար մնուած են: Հաց մի տուր ուտեն, ջուր մի տուր խմեն...

— Հապա այստեղ, —ընդհատեց նրան Մասլովան:— Այստեղ էլ այդպիսի ցաւի մէջ ընկայ: Երբ որ ինձ դատարանից բերեցին, կայարանիցն էլ մի խումբ կալանաւորներ բերեցին: Զիւթի նման կպան ինձնից: Հէի իմանում ինչպէս պրծնեմ ձեռքներիցը: Աստուած բարի տայ իրան, բանտապետի օգնականը բարկացաւ վրաները, քչեց մօտիցու: Մէկը այնպէս էր կպել, որ հազիւ հազ հոգիս ազատեցի:

— Ի՞նչ կերպարանքի մարդ էր, — հարցըց Խօրօշավկան:

— Թուիս էր. բեխեր ունէր:

— Հէնց նա է որ կայ:

— Ո՞վ:

— Շչեգլովը: Այն, որ նոր անց կացաւ:

— Ի՞նչ Շչեգլով է այդ:

— Վա, չնս իմանում՝ ով է: Երկու անգամ փախել է Սիրիորից: Այժմ նորից բռնել են, բայց էլի կը փախչի: Վերակացուներն էլ վախենում են նրանից, — ասաց Խօրօշավկան, որ կալանաւորների տոմսակ տանող-բերողն էր և զիտէր ամեն բան, ինչ որ կատարւում էր բանտում:— Անպատճառ կը փախչի:

— Ի՞նչ անենք որ կը փախչի, մեզ հօ հետք չի տանելու, — ասաց Կօրաբլեօվան:— Դու այն ասա մեզ, — դիմեց նա Մասլովային, — արլակատը ինչ ասաց քեզ խնդիրքի մասին, չ՞ որ հէնց հիմա պէտք է տալ:

Մասլովան պատասխանեց, որ ինքը ոչինչ չը գիտի:

Այդ միջոցին կարմրաշէկ կինը, պէսէնոտ ձեռքերը խիտ ու խճճուած կարմրաշէկ մազերի մէջ խրած ու եղունգներով քուրելով գլուխը, մօտեցաւ օղի խմող արիստօկրատուհիներին:

— Ես քեզ, կատերինա, կ'ասեմ բոլորը, ինչ որ պէտք է անել, — սկսեց նա:— Առաջ ու առաջ, պէտք է թուղթ տաս, թէ

անբաւական ես մնացել վճռից, իսկ յետոյ պէտք է պրօկռորդին յայտնես:

—Քնզ ինչ,—զայրացկոտ թաւ ձայնով դիմեց նրան Կօրաբլեօվան:—Օղու հոտ ես առել, հա, նայնեւ մի պատմի: Առանց քեզ էլ լաւ գիտենք, թէ ինչ պէտք է անել. քո օգնութեան պէտք չունենք:

—Դու ինչ ես մէջ ընկնում: քեզ հետ ով է խօսում:

—Օդի է ուղում սիրտ, զրա համար էլ մօտ-մօտ ես անում:

—Լաւ, լաւ, տուր իրան խմի, —ասաց Մասլօվան, որ միշտ ամենքին բաժանում էր իր ունեցած-չունեցածը:

—Ես նրան ռայնպէս կը տամ, որ...

—Դէ տուր տեսնենք, —վրայ գալով դէպի Կօրաբլեօվան, ասաց կարմրաշէկ կինը:—Երեխայ ես գտել վախացնես:

—Դէ կորի, անզգամ:

—Անզգամի ձայն եմ լսում:

—Շան թափան:

—Ես եմ թափանը: Սիրիրական, մարդասպան, —գոռաց կարմրաշէկ կինը:

—Հեռացիր, ասում եմ, —մուայլ կերպով ասաց Կօրաբլեօվան:

Բայց կարմրաշէկ կինը աւելի ու աւելի էր մօտենում, և Կօրաբլեօվան հրեց նրա բաց ու գէր կուրծքը: Կարմրաշէկ կալանաւորուհին կարծես հէնց զրան էր սպասում և անսակնկալ արագ շարժումով մի ձեռքով պինդ բռնեց Կօրաբլեօվայի մազերից, իսկ միւսով ուզում էր խիել նրա երեսին, բայց Կօրաբլեօվան բռնեց այդ ձեռքը: Մասլօվան ու Խօրօշավկան բռնեցին կարմրաշէկ կալանաւորուհու ձեռքերից ու աշխատում էին ազատել Կօրաբլեօվային, բայց չէին կարողանում բանալ մազերի հիւսը պինդ հուպ տուած ձեռքը: Կարմրաշէկ կալանաւորուհին մի րոպէ բաց թողեց մազերը, բայց նրա համար, որ իսկոյն և եթ փաթաթի բռննցքի շուրջը, իսկ Կօրաբլեօվան, գլուխը ծոած, մի ձեռքով թակում էր կարմրաշէկ կնոջ մարմինը ու աշխատում ատամներով բռնել նրա ձեռքը: Բոլոր կանայք խոնուեցին կռուողների շուրջը և գոռզոռում էին ու աշխատում բաժանել նրանց իրարից: Նոյն իսկ թռախտաւորը մօտեցաւ ու անդադար հազարով նայում էր կռուողներին: Երեխանները, իրար կուշ եկած, լալիս էին: Ազմուկը լսելով՝ ներս եկան վերակացուհին ու վերակացուն: Կռուողներին բաժանեցին, և Կօրաբլեօվան, արձակելով սպիտակած հիւսը ու գուրս տալով մազերի պաճուկած կտորները, իսկ կարմրաշէկ կալանաւորուհին, ձեռքով պահելով ամբողջապէս զգգուած շապիկը

գեղնագոյն կրծքի վրայ, — երկում էլ գոռզոռում էին և բացատրում ու գանգատում:

— Ես գիտեմ, անիծած օղին է բոլորի պատճառը. այ, վաղը կասեմ բանտապետին, մի լաւ կը շշպոփ ձեզ, Հոտը առնում եմ, — ասում էր վերակացուհին: — Տեսէք, ձեռաց ամեն բան պառակեցէք, թէ չէ վատ կը լինի, — զլուխ չունենք արդարն ու մեղաւորը ջոկելու, Կորէք տեղներդ ու սուս կացէք:

Բայց գեռ երկար ժամանակ լուսոթիւն չէր հաստատում: Դեռ երկար ժամանակ կանայք հայնոյում էին միմեանց ու պատմում իրար, թէ ինչպէս սկսուեց կոիւը և ով է մեղաւոր: Վերջապէս, վերակացուն ու վերակացուհին գնացին և կանայք սկըսեցին հանդարտուել ու պառկոտել: Պառաւը կանգնեց սրբի պատկերի առաջ ու սկսեց աղօթել:

— Իրար գտել են երկու սիրիրականները, — յանկարծ խըռապոտ ձայնով սկսեց կարմրաշէկ կալանաւորուհին տախտերի միւս ծայրից, ամեն մի խօսք համեմելով ամենատարօրինակ ու թունդ հայնոյանկներով:

— Հօր, սիրտող էմ գոռսոց է ուղղում, — խոկոյն պատասխանեց Կօրաբլեօվան և աւելացրեց նոյնպիսի հայնոյանկներ: Ու երկումն էլ լուցին:

— Ափսոս չը թողեցին, թէ չէ աշքերիդ պիտիկները կը հանէի... Նորից սկսեց կարմրաշէկ կալանաւորուհին ու խոկոյն և եթ ստացաւ նոյնպիսի մի պատասխան Կօրաբլեօվայից:

Նորից տիրեց լուսոթիւն, որ այս անգամ մի քիչ աւելի տևեց, ու յետոյ նորից սկսուեցին հայնոյանկները: Այնուհետեւ ընդմիջումները աւելի ու աւելի երկար էին լինում, մինչև որ, վերջապէս, ամեն ինչ բոլորովին հանդարտուեց:

Ամենաքը պառկած էին: Ոմանք սկսեցին խռոացնել: Չէին պառկած միայն պառաւը, որ միշտ երկար աղօթում էր և այժմ դեռ ծունը էր գնում սրբի պատկերի առաջ, և մէկ էլ տիրացուի աղջիկը, որ, վերակացունու դուրս գալուն պէս, վեր կացաւ տեղիցը ու նորից սկսեց գնալ-գնալ սենեակում:

Մասլօվայի քունը չէր տանում: Նրա մաքիցը չէր գուրս գալիս այն, որ ինքը այժմ սիրիրական է: արդէն երկու անգամ նրան հայնոյեցին այդ անունով՝ առաջ Բօշօվան, յետոյ կարմրաշէկ կալանաւորուհին: Խեղճը չէր կարողանում ընտելանալ այն մաքին, որ ինքը սիրիրական է:

Կօրաբլեօվան, որ պառկած էր մէջքը դէպի նա, շուռ եկաւ տեղումը:

— Ում մաքովը կ'անցնէր այդպիսի բան, — ցած ձայնով ա-

սաց Մասլովան:—Ռւրիները ինչ ասես անում են ու ոչինչ, իսկ իս անմեղ տեղովս պէտք է տանջուեմ:

—Դարդ մի անիւ աղջիկ: Սիբիրում էլ մարդիկ են ապրում: Դու այնտեղ էլ չես կորչի, —մխիթարում էր նրան Կօրաբլեօվան:

—Գիտեմ, որ չեմ կորչի, բայց էլի մարդուս վատն է թրւում: Ես լաւ կեանքի եմ սովոր և ուրիշ բախտի էի արժանի:

—Աստուծու կամքի հակառակ ով կարող է գնալ, —յօդոց քաշելով ասաց Կօրաբլեօվան:—Նրա կամքի հակառակ չես կարող գնալ:

—Գիտեմ, մօքբոյր, բայց էլի սիրոս այրւում է, երկում էլ լոեցին:

—Լսում ես: Ականջ դիր այն տուտուցին, —ասաց Կօրաբլեօվան, Մասլովայի ու շաբարութիւնը զարձնելով տախտերի միւս կողմից լսուող տարօրինակ ձայնի վրայ:

Կարմրաշէկ կնոջ զաված հեկեկանքների ձայնն էր այդ: Նա լալիս էր այն պատճառով, որ մի բոպէ առաջ իրան հայ-հոյեցին, ծեծեցին ու օղի չը տուեցին խմելու, մինչդեռ սիրոս սաստիկ ուզում էր խմել: Նա լալիս էր և այն պատճառով, որ իր ամբողջ կամքի ընթացքում ոչինչ չէր տեսել բայցի հայհոյանքից, ծաղրից, վիրաւորանքից ու ծեծից: Նա ուզում էր ինքն իրան մխիթարել մտաբերելով իր առաջին սէրը գէպի գործարանական բանուոր մեղկա Մօլոգենկօվը, բայց, յիշելով այդ սէրը, նա յիշեց և այն, թէ ինչպէս էր վիրջացել այդ սէրը: Խսկ այդ սէրը վիրջացել էր նրանով, որ Մօլոգենկօվը, հարբած ժամանակ, կատակի համար արջասպ էր քսել նրա երեսին ու յետոյ, ընկերների հետ, հանուում էր, նայելով, թէ ինչպէս է նա գալարում ցալից: Նա յիշեց այդ բանը և խեղճն եկաւ իր վրայ ու կարծելով, թէ ոչ չի լսում իր ձայնը, սկսեց լալ և լալիս էր երեխաների նման—տնկանքալով, քիթը ֆնչացնելով ու աղի արտասուցները կուլ տալով:

—Մեղքս գալիս է,—ասաց Մասլովան:

—Մեղք է, ի հարկէ, բայց ինչո՞ւ հանգիստ չի կենում:

XXXIII

Երբ միւս առաւօտ Նեխմիւդովը զարթնեց, նրա առաջին զգացմունքն այն եղաւ, որ իրան ինչո՞ր մի բան է պատահել, և մինչև անգամ գեռ չի յիշած, թէ ինչ էր այդ պատահածը, նա արդէն գիտէր, որ ինչ որ լուրջ ու լաւ բան է պատահել: «Կատիւշան, դատարանը»: Այս, և պէտք է դադարել ստելուց ու ասել

ամբողջ ճշմարտութիւնը, Եւ ինչ զարմանայի զուգադիպութիւն, —այդ նոյն առաւօտը, վերջապէս, ստացուեց ազնուականութեան պարագլխի կնոջից, Մարիա Վասիլիեվնայից, այնքան վաղուց սպասուած նամակը, որ առանձնապէս հարկաւոր էր նրան այժմ: Մարիա Վասիլիեվնան կատարեալ ազատութիւն էր տալիս նրան, բախտաւորութիւն էր բարեմաղթում նրան առաջիկայ ամուսնութեան մէջ:

—Ամուսնութիւն,—ասաց նա հեգնօրէն: —Որքան հեռու եմ ես այժմ այդ բանից:

Եւ նա յիշեց իր երէկուան մտադրութիւնը ամեն ինչ ասել այդ կնոջ ամուսնուն, խոստովանել իր մեղքերը նրա առաջ և պատրաստականութիւն յայտնել ամեն կերպ բաւարարութիւն տալու նրան: Բայց այս առաւօտ այդ այնքան հեշտ չէր թւում նրան, որքան երէկ: «Բայցի այդ, ինչու զուր տեղը անբախտացնեմ այդ մարդուն, որ դեռ ոչինչ չը գիտէ: Եթէ ինքը հարցնի, ուրիշ բան է, այն ժամանակ կ'ասեմ: Բայց դիտմամբ գնալ այդ բանն ասելու համար: Զէ, պէտք չէ»:

Միսսիին ամեն ինչ ճշմարտութեամբ ասելին էլ գտուար էր թւում այդ առաւօտ: Այդ դէպքումն էլ չէր կարելի սկսել այդպիսի խօսակցութիւն, որովհետեւ այդ վիրաւորական կը լինէր: Ինչպէս կենսական շատ ուրիշ յարաբերութիւնների մէջ, այդ դէպքումն էլ անհրաժեշտ էր, որ մնար մի բան, որ պէտք է գուշակելով հասկանային: Մի բան միայն վճռեց նա այդ առաւօտ: —այլ ևս չի գնայ նրանց մօտ և, եթէ հարցնեն, ճիշտը կ'ասի:

Բայց կատիւշայի հետ ունեցած յարաբերութիւնների մէջ ոչինչ չը պիտի մնայ անորոշ, կիսայայտ:

«Կը գնամ բանտը, կ'ասեմ նրան, կը խնդրեմ, որ ների ինձ: Եւ եթէ պէտք լինի, այո, եթէ պէտք լինի, կը պսակուեմ հետը», մտածում էր նա:

Այդ միափը, թէ բարոյական բաւարարութեան համար ինքը պէտք է դո՞ի ամեն ինչ ու պսակուի կատիւշայի հետ, առանձնապէս խանդաղատեցնում էր նրան այդ առաւօտ:

Վաղուց ի վեր նա այդքան եռանդով չէր վեր կացել անկողնից: Երբ որ Ագրաֆենա Պետրովնան մտաւ սենեակը, նա խսկոյն եեթ, այնպիսի վճռողականութեամբ, որ ինքն էլ չէր սպասում իրանից, յայտնեց նրան, թէ ինքը այլ ևս կարիք չունի այդ բնակարանին ու նրա ծառայութեանը:

Լուելեայն համաձայնութեամբ վճռուած էր, որ նա շարու նակում է ապրել այդ ահազին ու թանդ բնակարանում, որպէս զի պսակուի, բնակարանը վարձով տալը ուրեմն առանձին նը-

շանակութիւն ունէր: Ազրաֆենա Պետրօվսան զարմացած նայեց
նրան:

— Շատ չորհակալ եմ ձեզնից, Ազրաֆենա Պետրօվսա,
իմ մասին ունեցած հոգսերիդ համար, բայց այժմ ինձ հարկա-
ւոր չէ ոչ այսպիսի մեծ բնակարան, ոչ էլ որ և է ծառայ: Իսկ
եթէ դոք ուզում էք օգնել ինձ, բարի եղէք կարգադրելու, որ
բոլոր բաները հաւաքեն, կապեն, ինչպէս անում էիք մայրիկի օ-
րով: Յետոյ Նատաշան կը գայ, կը կարգադրի: (Նատաշան
Նեխլիւգովի քոյրն էր):

Ազրաֆենա Պետրօվսան թափ տուեց գլուխը:

— Ի՞նչպէս հաւաքել: Ախր պէտք կը գան, — ասաց նա:

— Զէ, պէտք չեն գալ, — ասաց Նեխլիւգովը, պատասխանելով այն բա-
նին, ինչ որ արտայայտում էր Ազրաֆենան գլուխը թափ տա-
լով: — Խնդրեմ, Կօրնէյին էլ ասէք, որ ոսճիկը այս գլխիցը տուել
եմ երկու ամսուայ համար, բայց նա էլ ինձ հարկաւոր չէ:

— Զնուր էք այդպէս անում, Դմիտրիյ Իվանօվիչ, — ասաց
Ազրաֆենան: — Լաւ, ասենք արտասահման էք գնալու, բայց չէ
որ էլի բաների համար տեղ է հարկաւոր:

— Մխալում էք, Ազրաֆենա Պետրօվսա: Արտասահման
չեմ գնալու. եթէ գնամ, բոլորովին ուրիշ տեղ կ'երթամ:

Ասաց ու յանկարծ սաստիկ կարմրեց:

« Եյն, պէտք է ասել սրան, — մտածեց նա. — ի՞նչ միտք ունի
լուսթեան տալը: Պէտք է՝ ինչ կայ չը կայ՝ ասել բոլորին»:

— Երէկ ինձ մի շատ արարինակ ու լուրջ բան պատահեց:
Ցիշում էք կատիւշային, որ Մարիա Իվանօվսա մօրքայրի մօտ էր:

— Ի՞նչպէս չեմ յիշում: Ես եմ նրան կար սովորեցրել:

— Երէկ ես երդուեալ դատաւոր էի և մենք դատում էինք
այդ կատիւշային:

— Խեղճ աղջիկ, — ասաց Ազրաֆենա Պետրօվսան: — Ի՞նչի
համար էիք դատում:

— Սպանութեան համար, — և մեղաւորը ես եմ:

— Դոք ի՞նչպէս կարող էիք մեղաւոր լինել: Շատ տարօ-
րինակ բան էք ասում, — ասաց Ազրաֆենա Պետրօվսան, և նրա
պառաւ աչքերի մէջ կայծեր երեացին:

Նա գիտէր Նեխլիւգովի ու կատիւշայի մէջ պատահածը:

— Եյն, ես եմ պատճառ եղել: Եւ ահա այդ բանը փոփո-
խեց իմ բոլոր ծրագրիները:

— Ի՞նչ փոփոխութիւն կարող էր լինել այդ բանից ձեր
վերաբերմամբ, — ասաց Ազրաֆենա Պետրօվսան, զսպելով ժպիար:

— Այն փոփոխութիւնը, որ, եթէ ես եմ եղել պատճառը,

որ նա այդ ճանապարհն է բռնել, կը նշանակի ես պէտք է ձեռքիս եկածը անեմ նրան օգնելու համար:

—Զեր կամքն է, բայց ինչ մի առանձին մեղք կայ այդտեղ ձեր կողմից: Ամենքի հետ պատահում է այդ, և եթէ ինեւ լոք են լինում, ամեն ինչ չխուլում է ու մոռացւում ու կարգին ապրում են իրանց համար,—ասաց Ազրաֆենա Պետրօվնան խիստ ու լուրջ եղանակով,—և դուք զուր էք ձեզ մեղադրում ես առաջ էլ լսել էի, որ նա ուղիղ ճանապարհոց մոլորուել է. ինչ անենք, ով է մեղաւոր:

—Ես եմ մեղաւորը Ռւսակի և ուզում եմ ուղղել արածու:

—Էլ ուղղել շատ գժուար է:

—Այդ իմ գործն է: Իսկ եթէ գուք ձեր մասին էք մտածում, իմացէք, որ այն, ինչ որ մայրիկը ուզում էր...

—Ես իմ մասին չեմ մտածում. Հանգուցեալից այնքան ըարիք եմ տեսել, որ էլ ոչինչ չեմ ցանկանում լիդանկաս ինձ կանչում է իր մօտ (այդ նրա քրոջ ամուսնացած աղջիկն էր). երբ որ ձեզ հարկաւոր չը լինեմ, կ'երթամ նրա մօտ: Բայց գուք զուր էք սրտներդ անհանգիստ անում այդ բանի համար,—ում հետ չի պատահում:

—Ես բոլորովին ուրիշ կարծիքի եմ: Եւ դարձեալ խնդրում եմ ձեզ օգնել ինձ բնակարանը վարձով տալու և բանը-մանը հաւաքելու: Համ էլ մի նեղացէք ինձանից: Ես շատ ու շատ չնորհակալ եմ ձեզնից:

Զարմանալի՛ բան,—այն բովէից, որ Նեխլիւդօվը հասկացաւ, որ ինքը վաս է ու զարշելի ինքն իր աչքում, նոյն բովէից սկսած ուրիշները այլ ես գարշելի չէին թւում նրան. ընդհակառակը, թէ դէպի Ազրաֆենա Պետրօվնան, թէ դէպի Կօրնէլը նա զգում էր գորով ու յարգանք: Նա ուզում էր Կօրնէլի առաջ էլ խոստովանել իր մեղքը, բայց այնքան պատկառալից ու ազդու էր Կօրնէլի տեսքը, որ նա սիրտ չարեց նրա հետ այդ բանի մասին խօսել:

Դատարան գնալիս, միննոյն կառքով անցնելով միննոյն փողոցներով, Նեխլիւդօվը ինքն իր վրայ զարմանում էր՝ բոլորովին ուրիշ մարդ զգալով իրան այսօր:

Միստի հետ պսակուելը, որ գեր երէկ այնքան մօտալուտ բան էր թւում նրան, այժմ բոլորովին անհնար էր թւում: Երէկ նա իր զրութեան մասին այնպիսի գաղափար ունէր, որ անկասկած հաւատացած էր, թէ Միստին երջանիկ կը զգայ իրան նրա հետ ամուսնանալով. այսօր նա ինքն իրան անարժան էր համարում ոչ միայն նրա ամուսինը, այլ և մուերիմը լինել: «Եթէ նա իմանար, թէ ինչ տեսակ մարդ եմ ես, անշուշտ կը կար-

դագրէր, որ ինձ չընդունեն: Իսկ ես դեռ մաքումս մեղադրում էի նրան այն պարոնի հետ կօքէտութիւն անելու համար: Սակայն ենթադրենք նոյն իսկ, թէ նա այժմ կը համաձայնէր իմ կինը լինել, բայց միթէ ես կարող էի, չեմ ասում՝ բախտաւոր, այլ թէկուզ հանգիստ լինել, լաւ իմանալով, որ այն մէկը այստեղ է, բանտումն է և վաղը կամ միւս օրը էտապով կը գնայ Սիրիք տաժանակիր աշխատանքներում տանջուելու: Իմ ձեռքով կորուսի մատնուած խեղճ կինը կ'երթայ Սիրիք, իսկ ես այստեղ այդ ժամանակ կը զբաղուեմ չնորհաւորութիւններ ընդունելով ու այցելութիւններ անելով նորահարս կնոջս հետ: Կամ թէ աղնուականութեան պարագլիխ հետ, որին ես խայտառակ կերպով խարում էի, թեր և դէմ ձայներ կը հաշուեմ ժողովում դպրոցական և ուրիշ հարցերի մասին եղող որոշումների վերաբերմամբ ու յետոյ ժամադրութիւն կը նշանակեմ նրա կնոջը (թու, ինչ զգուելի բան), կամ կը շարունակեմ նկարս, որ անկասկած երբէք չեմ վերջացնելու, որովհետև իսկապէս պէտք էլ չի, որ ես պարապեմ այդպիսի դատարկ բաներով: Ել այժմ չեմ կարող անել այդպիսի բաներ», —ասում էր նա ինքն իրան, շարունակ հրճուելով այն ներքին փոփոխութեան վրայ, որ նա զգում էր իր մէջ:

«Ամենից առաջ, —մտածում էր նա, —այժմ պէտք է տեսնել փաստաբանին ու իմանալ, թէ ինչ է վճռել նա, իսկ յետոյ... յետոյ գնալ բանտը, տեսնել երէկուայ կալանաւորուհուն ու ասել նրան ամեն ինչ»:

Եւ երբ նա երեսակայում էր, թէ ինչպէս կը տեսնի նրան, ինչպէս կ'ասի նրան ամեն բան, ինչպէս կը խոստովանի իր մեղքը՝ նրա առաջ, ինչպէս կը յայտնի նրան, թէ ինքը կ'անի ձեռքից բոլոր եկածը ու կը պամարտի նրա հետ իր մեղքը քաւելու համար, —այն ժամանակ նա համակւում էր մի տեսակ յափշտակութեամբ և աշքերը լցւում էին արտասուզով:

XXXIV

Դատարանը համանելով, Նեխիլիւգօվը հէնց միջանցքում պատահեց երէկուայ դատական պրիստավին ու հարցրեց նրանից, թէ որտեղ են պահւում արդէն դատապարտուած կալանաւորները և ումից պէտք է ինսդրել նրանց հետ տեսնուելու թոյլտութիւն: Դատական պրիստավը բայց առեց, որ կալանաւորները զանազան տեղերում են պահւում և մինչև վճռոը վերջնական ձեռվ յայտնելը՝ տեսակցութեան թոյլատրութիւնը կախուած է դատախազից: — «Ես ձեզ կը յայտնեմ ու կը տանեմ նիստից յետոյ:

Դատախազը դեռ չի եկելու նիստից յետոյ պէտք է տեսնել նըրան։ Իսկ այժմ համեցէք նիստի։ Իսկոյն կը սկսուի։

Նեխիւղօվը այդ սիրալիրութեան համար չնորհակալութիւն յայտնեց պրիստավին, որ այսօր իրան առանձնապէտ ուղորմելի էր թւում, ու գնաց երգուեալ ատենակալների սենեակը։

Այն ժամանակ, երբ նա մօտենում էր այդ սենեակին, միւս երգուեալ դատաւորները արդէն դուրս էին գալիս այնտեղից՝ նիստի դահլիճը գնալու համար։ Վաճառականը, ինչպէս և երէկ, ուրախ էր ու արդէն նախաձաշել ու կոնծել էր և Նեխիւղօվին հանդիպեց, ինչպէս մի հին բարեկամի։ Պեօար գերասիմօվին էլ այսօր Նեխիւղօվի մէջ ոչ մի անախորժ զգացմունք չէր զարթեցնում իր մտերմականութեամբ ու քըրքիջով։

Նեխիւղօվի սիրան ուղում էր բոլոր երգուեալ դատաւորներին յայտնել։ Թէ ինչ յարարերութիւն ունի ինքը երէկուայ մեղապարտ կողով հետո «Իսկապէս ասած, —մտածում էր նա, — հէնց երէկ, դատի ժամանակ պէտք է վեր կենացի ու հրապարակով յայտնէի մնջքս»։ Բայց երբ նա միւս երգուեալների հետ մտաւ նիստի դահլիճը ու սկսուեց երէկուայ պատմութիւնը, — դարձեալ «ատենանը գալիս է», դարձեալ երեք շքագգեստ պաշտօնեայ բազմած վերեւում, դարձեալ լոռութիւն, երգուեալ ատենակալների տեղաւորումը բարձրամէջք աթոռների վրայ, ժանգարմները, քահանան, — նա զգաց, որ թէն պէտք էր այդ անել, բայց նա երէկ էլ չէր կարող խանգարել այդ հանդիսաւորութիւնը։

Նոյն նախապատրաստութիւնները տեղի ունեցան մինչև դատի սկսուելը, ինչ որ երէկ, այն բացառութեամբ, որ ատենակալներին նորից չերգուեցրեցին ու նախազահը ճառ չասաց նրանց։

Այս օրուայ գործը խորտակմամբ գողութիւն էր։ Մեղադրեալը, որի մօտ իրը լրանալուն կանգնած էին երկու սրամներկ ժամանակներ, մի նիհար, նեղթիւունք 20 տարեկան պատանի էր՝ մոխրագոյն խալաթով և անարի՛ւ մոխրագոյն դէմքով։ Եա մենակ նստած էր մեղադրեալների նստարանի վրայ ու յօնքերի տակից դիտում էր ներս մտնողներին։ Սյդ պատանին մեղադրուում էր նրանում, որ իր ընկերոջ հետ ջարդել էր ցախատան դռան կողապէքը ու այնտեղից գողացել հին փալասներ Յ ուորի 67 կոպէկ արժողութեամբ։ Մեղադրական թղթից երեսում էր, որ փողոցային ոստիկանը այդ պատանուն կանգնեցրել էր այն ժամանակ, երբ նա գնում է եղել փողոցով իր ընկերոջ

հետ, որ ուսին զցած տանելիս է եղել փարասները, Պատանին ու ընկերը իսկոյն և եթ խօստովանուել էին իրանց մեղքը և նրանց երկուսին էլ դրել էին բանտը: Պատանու ընկերը, որ մի փականագործ էր, մեռել էր բանտում, և ահա այսօր պատանին դատում էր միայնակ: Հին փարասները դրուած էին իրական ապացոյցների սեղանի վրայ:

Գործը վարում էր ճիշտ այնպէս, ինչպէս և երէկ,—էլի ապացոյցներ, մեղադրական փաստեր, վկաներ, երգումն, հարց ու փորձ, էքսպէրտաներ եւ այլն: Նախագահի, մեղադրողի և պաշտպանի հարցերին՝ վկայ փողոցային ոստիկանը մեքենայաբար պատասխանում էր՝ «հրաման ձեզ», «չեմ կարող իմանար» և նորից «հրաման ձեզ»... բայց, չը նայելով նրա զինուորական շշմածութեանը և մեքենայակերպութեանը, պարզ երևում էր, որ նա խղճում է պատանուն ու գժկամութեամբ է պատմում նրա ձերբակալութեան մասին:

Միւս վկան, գողացուած փարասների տէր ծերուկը, որ ակներևաբար մաղձու մարդ էր, երբ հարցըրին՝ ճանաչում է արդեօք այդ փարասները, մեծ գժկամութեամբ ասաց, որ իրանն են. իսկ երբ դատախազի օգնականը սկսեց հարց ու փորձ անել, թէ ինչի համար էր գործ դնելու այդ փարասները, արդեօք շատ էին հարկաւոր նրան, նա բարկացաւ ու պատասխանեց.—«Թէ կուզ ամենենին չը լինէին էլ այդ փարասները. իսկի պէտք չեն ինձ, եթէ իմանայի, որ այգան գլխացաւանք եմ ունենալու նրանց պատճառով, ոչ միայն գանգատ չէի տայ նրանց մասին, այլ և տասը, մինչև անգամ քսան ուռւրի էլ վրան կը դնէի, միայն թէ ինձ քաշ չը տային հարց ու փորձի համար: Հէնց միայն կառապաններին ծ ուռւրի տուած կը լինեմ: Դեռ տկար էլ եմ: Պորտաթափութիւն ունեմ, ուկրացան էլ հետք»:

Այդպէս էին խօսում վկաները, իսկ ինքը մեղադրեալը ամեն բանում մեղքը շինքն էր առնում և, բոնուած գազանիկի նման անմտաբար այս ու այն կողմը նայելով, ընդհատուող ձայնով պատմում էր ամեն ինչ, ինչպէս որ եղել էր:

Գործը պարզ էր, բայց դատախազի օգնականը, էլի երէկուայ պէս, ուսերը վեր քաշելով խորագէտ հարցեր էր տալիս, աշխատելով բռնել խորամանկ յանցաւորին:

Իր ճառում նա ապացուցանում էր, թէ գողութիւնը կատարուած է մարդարնակ շինքի մէջ և կողպէքը ջարդելով, ուստի մեղադրեալին պէտք է ենթարկել ամենածանր պատժի:

Իսկ դատարանի կողմից նշանակուած պաշտպանը ապացուցանում էր, թէ գողութիւնը կատարուած է անմարդարնակ շինքում, այնպէս որ, թէպէտ չի կարելի հերքել մեղադրեալի

յանցաւորութիւնը, բայց պէտք է ընդունել, որ նա այնքան էլ վտանգաւոր չէ հասարակութեան համար, որքան պնդում է դատախաղի օդնականը:

Նախազագահը, ինչպէս և երէկ, անաշառութեան և արդարադատութեան կերպարանք էր ընդունել և մանրամասնօրէն բացատրում ու թելադրում էր երդուեալ ատենակալներին այնպիսի բաներ, որ նրանք գիտէին և չէին կարող չփմանար երէկուայ նման, էլի ընդհատումներ եղան, էլի գնացին ծխելու, էլի դատական պրիստավը գոռաց՝ «ատենանը գալիս է» և էլի երկու սրամերկ ժանդարմներ նստած էին ու աշխատում էին չը քնել:

Գործից երեսում էր, որ այդ պատանու հայրը՝ երեխայ ժամանակը նրան տուել էր թութունի գործարան, ուր նա մնացել էր 5 տարի: Այս տարի գործարանատէրը անախորժութիւն էր ունեցել բանուորների հետ և նրան էլ ուրիշ բանուորների հետ արձակել էր: Անգործ մնալով, նա պարապ-սարապ քաշ էր զալիս փողացներում, ունեցած չունեցածը զինու տալով: Տրակտիրում նա ընկերացել էր իր նման տեղից զրկուած ու հարցեցողութեամբ պարապով մի փականազործի հետ, ու նրանք երկուսով, հարբած ժամանակ, զիշերը, կոտրել էին մի ցախատան կողպէք ու վերցրել ինչ որ ձեռներն էր ընկել: Նրանց բռնել էին: Նրանք ամեն բան ուղիղ խոստովանուել էին: Նրանց զցել էին բանար, ուր փականազործը, մինչև դատի օրը, մնուել էր: Իսկ պատանուն այժմ դատում էին, իբրև մի վտանգաւոր արարածի, որից պէտք է պատսպարել հասարակութիւնը:

«Եոյնպիսի վտանգաւոր արարած, ինչպէս և երէկուայ կալանաւորուհին, —մտածում էր Նեխլիւդօվը, լսելով այն բոլորը, ինչ որ տեղի էր ունենում նրա առջեւ: —Երանք վտանգաւոր են իսկ մ՞նաք, վտանգաւոր չենք... Ես՝ անառակա, խարերաս, և մենք ամենքս, այն ամենքը, որոնք ինչ եղածս զիտէին, բայց ոչ միայն չէին արհամարհում, այլ և յարգում էին ինձ:»

Չէ որ ամիսերն է, որ այս պատանին մի օտարոտի եղեռնագործ չէ, այլ: —ամենաքն էլ լաւ տեսնում են այդ, —ամենասովորական մի մարդ, և որ նա այնպիսի մարդ է դարձել, ինչպէս որ կայ, միմիայն այն պատճառով, որ ասպեկ է այնպիսի պայմաններում, որոնք առաջացնում են այդպիսի մարդիկ: Ուստի և, կարծեմ, պարզ է, որ այդպիսի պատանիներ չը լինելու համար, պէտք է աշխատել ոչնչացնել այն պայմանները, որոնց չնորհիւ առաջ են գալիս այդպիսի թշուառ արարածներ: «Բաւական էր գտնուէր մի մարդ, —մտածում էր Նեխլիւդօվը, նայելով պատանու հիւանդոտ, վախուորած գէմքին, —որ այն ժամանակ, երբ կարլիքից ստիպուած այդ տղացից գիւղից բերել էին ու տալիս

Էրն քաղաքի գործարանը, խղճար նրան ու օգնութիւն հասցնէր այդ կարիքին, կամ նոյն իսկ այն ժամանակ, երբ նա քաղաքումն էր և, գործարանում 12 ժամ բանելուց յետոյ, իրան գայթակեցնող ընկերների հետ գնում էր տրավորիր, բաւական էր մէկը, որ ասէր,—«Մի գնայ, Վանեա, լաւ չէ»,—ու խեղճ տղան չէր գնայ, չէր մոլորուի ու ոչ մի վատ բան չէր անի:

«Բայց այնպիսի մարդ, որ խղճար նրան, չը գտնուեց ոչ մէկը այն բոլոր ժամանակի ընթացքում, երբ նա, իրուն մի զագանիկ, ապրում էր քաղաքում իր աշկերտութեան տարիները և, զլուխը, ոջիներ չը շատացնելու համար, տակնահան խուզած, վազում էր, իբր արհեստաւոր, բաներ առնելու. ընդհակառակը, քաղաքում ապրած ամբողջ ժամանակը արհեստաւորներից և ընկերներից լուծը միայն այն է եղել, թէ տղամարդը նա է, ով կարողանայ խարել, կոնծել, հայհոյել, ծեծել ու անառակութիւն անել:

«Իսկ երբ նա, անառողջ աշխատանքից, հարբեցողութիւնից ու անառակ կեանքից փչացած ու հիւանդացած, թմրածի պէս, շամածի պէս, աննպատակ ման էր գալիս քաղաքում և յիշմարացած մտաւ մի ցախատուն ու վերցրեց այնտեղից մի քանի բոլորովին անպէտք փալասներ, մենք ոչ թէ հոգս տարանք ոչնչացնելու այն պատճառները, որոնք այդ պատանուն հասցրել են այժմեան վիճակին, այլ ուզում ենք բանը ուզզել այդ պատճունով»:

Սոսկալի է:

Նեխմիւդօվը այդ բոլորը մտածում էր, առանց այլ ևս ականջ գնելու իր առջեր կատարուող բաներին, Եւ ինքն էլ սարսափում էր այն բանից, որ պարզում էր իր առաջ: Նա զարմանում էր, թէ ինչպէս էր, որ ինքը առաջ չէր տեսնում այդ, ինչպէս էր, որ ուրիշները չէին տեսնում այդ:

XXXV

Հէնց որ առաջին ընդմիջումը եղաւ, Նեխմիւդօվը վեր կացաւ ու դուրս եկաւ միջանցքը՝ այլ ևս ատեանը չը վերադառնալու դիտաւորութեամբ: Թող ինչ ուզում են՝ անեն նրան, բայց նա այլ ևս չի կարող մասնակցել այդ կատակերգութեանը:

Նա հարցրեց, թէ սրտեղ է գատախազի առանձնահանեակը ու գնաց այնտեղ: Սպասաւորը չէր ուզում թողնել, որ նա ներս մտնի, ասելով, թէ գատախազը զբազուած է այժմ, բայց Նեխմիւդօվը ականջ չը դրեց նրան ու, ներս մտնելով, դիմեց աստիճանաւորներից մէկին, խնդրելով զեկուցանել գատախազին,

որ ինքը երդուեալ ատենակալ է և ուզում է տեսնել նրան մի շատ կարեոր գործի համար իշխանական տիտղոսը և վայելուչ հագուստը օգնեցին Նեխլիւդովին։ Աստիճանաւորը զեկուցեց դատախազլին, և Նեխլիւդովին ներս թողեցին Դատախազը կանդնած ընդունեց նրան, ակներևաբար գժոռն լինելով, որ Նեխլիւդովը այդպէս յամառ կերպով տեսակցութիւն էր պահանջել նրա հետ։

—Ի՞նչ էր կամենում, —խիստ կերպով հարցրեց դատախագը։

—Ես երդուեալ ատենակալ եմ, ազգանունս Նեխլիւդով է, ինձ անհրաժեշտ է տեսնուել մեղադրեալ Մասլովայի հետ, —արագ ու վճռաբար արտասանեց Նեխլիւդովը, կարմրելով և զգալով, որ նա այնպիսի մի բան է անում, որ վճռական ազդեցութիւն է ունենալու նրա ամբողջ կեանքի վրայ։

Դատախազը մի ցածրահասակ ու թուխ-թուխ մարդ էր, կարծ ու սպիտակող մազերով, փայլուն ու արագաշարժ աչքերով և գուրս պրծած ներքին ծնօտով, որի վրայ երեսում էր խուզուած խիտ միրուք։

—Մասլովայի հետ Հա, գիտեմ! Մեղադրուում էր թունաւորման մէջ, —հանգիստ կերպով ասաց դատախազը։ —Ի՞նչո՞ւ էր ուզում տեսնել նրան, —Ռւ յետոյ, կարծէք ուզելով մեղմացնել ասածը, աւելացրեց։ —Ես չեմ կարող թոյլ տալ տեսնուել նրա հետ, առանց իմանալու, թէ ինչո՞ւ է պէտք այդ ձեզ։

—Այդ ինձ պէտք է ինձ համար մի շատ կարեոր պատճառով, —կարմրատակելով, ասաց Նեխլիւդովը։

—Այդպէս, —ասաց դատախազը ու, աչքերը վեր բարձրացնելով, ուշադրութեամբ զննեց Նեխլիւդովին։ —Նրա գործը քըն-նուել է արդէն թէ ոչ։

—Երէկ էր դատը. չորս տարի ժամանակով տաժանակիր աշխատանքների դատապարտուեց բոլորովին անհիմն կերպով, նա անմեղ է։

—Այդպէս: Եթէ միայն երէկ է նա դատապարտուած, —ասաց դատախազը, բոլորովին ուշադրութիւն չը դարձնելով Նեխլիւդովի ասածին, թէ Մասլովան անմեղ է, —կը նշանակի մինչև վերջնական ձևով յայտարարուելը նա այնուամենայ-նիւ պէտք է պահուի նախնական կալանաւորութեան բանտում։ Այնտեղ միայն որոշ օրեր կարելի է տեսակցութիւն ու-նենալ։ Խորհուրդ եմ տալիս ձեզ դիմել այնտեղ։

—Բայց ինձ պէտք է նրան տեսնել որքան կարելի է շուտ, —ասաց Նեխլիւդովը, զգալով, որ ներքին ծնօտը գործում է և որ մօտենում է վճռական վայրկեանը։

— Ինչու է պէտք ձեզ այդ բանը, — մի քիչ անհանգստութեամբ բարձրացնելով յօնքերը, հարցրեց դատախազը:

— Երա համար, որ նա անմեղ է և դատապարտուել է տաժանակիր աշխատանքների: Իսկ ամեն բանում մեղաւորը ես եմ, — գողգոջուն ձայնով ասաց Նեխլիւդօվը, զգալով միւնոյն ժամանակ, որ այսպիսի բան է ասում, որ չը պէտք էր ասել:

— Ի՞նչպէս, — հարցրեց դատախազը:

— Ես հրապուրեցի նրան և հասցրի այն դրութեան, որի մէջ նա այժմ գտնում է: Եթէ ես նրան այդ դրութեան հասցրած չը լինէի, նա այդպիսի մեղադրանքի չէր ենթարկուի:

— Այնուամենայնիւ ես չեմ տեսնում, թէ ինչ կապ կայ այդ բանի և ձեր ցանկացած տեսակցութեան մէջ:

— Այն կապը, որ ես ուղում եմ նրա հետ գնալ Սիրիր և... պսակուել հետը, — ասաց Նեխլիւդօվը: Եւ, ինչպէս միշտ այդ բանի մասին խօսելիս, աշքերը իսկոյն լցուեցին արտասուրով:

— Հա, Այդպէս ուրեմն, — ասաց դատախազը: — Այդ ճիշտ որ շատ բացառիկ դէպք է: Դուք, կարծեմ, Կրամանօպեհօրսկի զեմստվոյի ձայնաւոր էք, չէ, — հարցրեց դատախազը, կարծես մտարերելով, որ ինքը առաջ էլ լսել է այդ Նեխլիւդօվի մասին, որ այժմ այդպիսի տարօրինակ բան է վճռել:

— Ներեցէք, կարծեմ, այդ կապ չունի իմ խնդիրքի հետ, — կարմրատակելով ու զայրացած նկատեց Նեխլիւդօվը:

— Ի հարկէ, չունի, — հազիւ հազ նշմարելի կերպով ժպտալով ու առանց ամեններն շփոթուելու, ասաց դատախազը, — բայց ձեր ցանկութիւնը այնքան արտասովոր բան է, այնքան նման չէ սովորական ձեւրի...

— Ասացէք, ինդիրեմ, թոյլտութիւն կարող եմ ստանալ թէ ոչ:

— Թոյլտութիւն: Այս ըոսպէիս: Նեղութիւն կրէք նստել:

Դատախազը մօտեցաւ սեղանին, նստեց ու սկսեց զրել:

— Նստեցէք, խնդրում եմ:

Նեխլիւդօվը մնաց կանգնած:

Դատախազը զրեց պրծաւ թոյլտութեան տոմար ու տուեց Նեխլիւդօվին, հետաքրքրութեամբ նայելով նրա վրայ:

— Բացի այդ, պէտք է յայտնեմ, — ասաց Նեխլիւդօվը, — որ ես չեմ կարող այսուհետեւ մասնակցել նիստերին:

— Երա համար, ինչպէս զիտէք, պէտք է ներկայացնել յարգելի պատճառներ:

— Իմ յարգելի պատճառներն այն են, որ ես դատաստանը առհասարակ համարում եմ ոչ միայն անօգուտ, այլ և անբարուական բան:

—Այդպէս, —ասաց դատախազը, դարձեալ նոյն, հազիւ նշմարելի, ժափտով, կարծես ցոյց տալով այդ ժափտով, թէ այդ-պիսի կարծիքներ յայտնի են իրան և պատկանում են ծիծաղելի հայեացքների որոշ դասին: —Այդպէս, բայց դուք ի հարկէ հասկանում էք, որ ես, իբր դատախազ, չեմ կարող համաձայնել ձեզ հնատ: Ուստի խորհուրդ եմ տալիս ձեզ յայտնել այդ բանը դատի ժամանակ, և դատարանը, քննելով հարցը, կամ յարգելի կը գտնի ձեր ասածը կամ ոչ յարգելի ու վերջին դէպքում տուագնք կը դնի ձեր վրայ: Դիմեցէք դատարանին,

—Ես արդէն յայտնեցի և էլ ոչ մի տեղ չեմ գնայ դրա համար, —բարկացած ասաց Նեխիւդօվը:

—Ծտեսութիւն, —զլուխ տալով ասաց դատախազը, ակներեարար ցանկանալով որքան կարելի է շուտ ազատուել այդ տարօրինակ այցելուից:

—Այդ ով էր ձեզ մօտ, —հարցրեց դատարանի մի անդամ, մտնելով դատախազի առանձնասենեակը Նեխիւդօվի դուրս գալուց անմիջապէս յետոյ:

—Նեխիւդօվը, զիտէք, այն, որ կրասնօպերսկի գաւառի զեմստվոյւմ զանազան տարօրինակ առաջարկութիւններ էր անում: Երեակայեցէք, երդուեալ ատենակալ է, իսկ մեզադրեալ ների թւում եղել է մի կին կամ աղջիկ, որին տաժանակիր աշխատանկների են դատապարտել. իր ասելով, ինքն է եղել այդ աղջկան հրապուրողը և այժմ ուզում է պսակուել հետո:

—Ի՞նչ էք ասում, անկարելի բան է:

—Ի՞նքն իր բերնով ասաց ինձ... Պէտք է տեսնէիք, թէ ինչպէս դրգուռած դրութեան մէջ էր:

—Շատ էլ նօրմալ մարդիկ չեն այժմեան ջահէլները:

—Ասենք, նա շատ էլ ջահէլներից չէ:

—Օ՛, մեր բարեկամ, պէտք է ասեմ, որ զլուխներս տարաւ ձեր հոչակաւոր իվաշչէնկօվը: Մարդու հոգի է հանում, խօսում է ու խօսում անվերջ:

—Պէտք է դրանց ուղղակի ընդհատել, թէ չէ իսկական օրսարուկցիօնիստներ են:

XXXVI

Դատախազի մօտից Նեխիւդօվը գնաց ուղղակի նախնական կալանաւորութեան բանաը: Բայց Մասլօվան այնտեղ չէր և բանտապեար բացատրեց Նեխիւդօվին, թէ նա պէտք է լինի հին փոխադրական բանտում: Նեխիւդօվը գնաց այնտեղ:

Արդարն, Եկատերինա Մասլօվան այնտեղ էր:

Նախնական կալանաւորութեան բանտից մինչև փոխադրական բանտը ահագին տարածութիւն էր և Նեխիւղովը միայն երեկոյեան հասաւ այնտեղ, Նա ուզեց մօտենալ այդ բանտի ահագին ու մոռյլ շնչքի դարպասին, բայց պահապան զինուորը թոյլ չը տուեց և զանգը քաշեց. Զանգի ձայնին դուրս եկաւ վերակացուն: Նեխիւղովը ցոյց տուեց թոյլատրութեան թուղթը, բայց վերակացուն ասաց, որ առանց բանտապետի հրամանին ինքը չէ կարող ներս թողնել նրան: Նեխիւղովը զնաց բանտապետի մօտ: Դեռ սանդուխներով բարձրանալիս, Նեխիւղովը լսում էր, որ դուն յետեին ինչոր բարդ ու աղմկալից բան են նուագում՝ դաշնամուրի վրայ: Իսկ երբ մի աչքը կապած ու բարկացած աղափինը բաց արեց նրա առաջ դուռը, այդ հնչիւնները ծակեցին նրա ականջները, կարծես դուրս խուժելով սենեակից: Լիստի բապօղիան էր այդ, որ արդէն ձանձրացրել է ամենքին և որ դաշնակահարը լաւ էր նուագում, բայց միայն մինչև մի որոշ տեղ: Երբ նա համառում էր այդ տեղին, սկսում էր նորից կրկնել նոյն բանը:

Նեխիւղովը հարցրեց, տանն է արդեօք բանտապետը:
Աղափինն ասաց, որ տանը չէ:

— Ծնեւ կը գայ:

Բապօղիան նորից կանգ տուաւ և նորից աղմկալից ու փայլուն կերպով կրկնուեց մինչև կախարդուած տեղը:

— Գնամ, հարցնեմ:

Ու աղափինը զնաց:

Բապօղիան նոր էր սկսել զլել, երբ յանկարծ, առանց համելու կախարդուած տեղին, ընդհատուեց և լսուեց մի կանացի ձայն.

— Ասա իրան, որ տանը չէ և այսօր չի լինի տանը: Հիւրէ գնացել ինչ են մարդու գլուխ տանում,—ասաց դռան յետեին կանացի ձայնը և նորից թնդաց բապօղիան, բայց չուտով ընդհատուեց և լսուեց յետ հրուող աթոռի ձայն: Ակներեւաբար, բարկացած դաշնակահարը ուզում էր անձամբ նկատողութիւն անել այդպէս անժամանակ եկած աներես այցելուին:

— Հայրիկը տանը չէ,—դուրս գալով սենեակից, բարկացած ասաց մի գունատ օրիորդ, խճճուած մազերով, ողորմելի տեսքով և տակերը կապտած վհատ աչքերով: Տեսնելով, որ հարցնողը երիտասարդ մարդ է ու լաւ վերարկուով, նա մեղմացաւ ու շարունակեց:— Եներս մտէք, խնդրեմ... ի՞նչ էք կամենում:

— Բանտում մի կալանաւորուհի կայ, ուզում եմ տեսնել: Թոյլատութեան թուղթ ունեմ դատախազից:

— Զը գիտեմ՝ ինչպէս պէտք է լինի, հայրիկը տանը չի
Ներս մտէք, ինդրեմ, — նորից ներս կանչեց նա Նեխլիւդօվին
փոքրիկ նախասենեակից: — Կամ, կուզէք, դիմէք բանտապետի
օգնականին, նա գրասենեակումն է այժմ ի՞նչպէս է ձեր աղջա-
նունը:

— Ծնորհակալութիւն, — ասաց Նեխլիւդօվը, առանց պա-
տասխանելու հարցին, ու դուքս եկաւ:

Դեռ դուքս նրա յետեից չը փակուած, դարձեալ սկսուեցին
առաջուան ուրախ ու աղմկալից նօտաները, որոնք չէին սազում
ոչ այն տեղին, ուր նրանք հնչում էին, ոչ էլ այն ողորմելի աղ-
ջըկայ դէմքին, որ այդպէս յամառ կերպով սերտում էր նրանց:
Բակում Նեխլիւդօվը հանդիպեց մի ցից-ցից ու ներկած բեխե-
րով ջահէլ օֆիցէրի ու հարցրեց նրանից, թէ որտեղ կարող է
տեսնել բանտապետի օգնականին: Դուքս եկաւ, որ հէնց ինքը
օգնականն էր այդ: Նա վերցրեց թոյլատրութեան թուղթը,
նայեց ու ասաց, որ ինքը գտուարանում է ներս թողնել նրան
իրանց բանտը նախնական կալանաւորութեան բանտի համար
տուած թղթով:

— Վերջապէս ուշ էլ է: Վազը համեցէք, Վազը ժամի 10-ին
ամենաքին թոյլ է տրուում տեսակցութիւն: Եկէք, բանտապետն
էլ այստեղ կը լինի. այդ ժամանակ կարելի է տեսակցել միայն
ընդհանուր սենեակում, բայց եթէ բանտապետը թոյլ տայ, կա-
րելի է և գրասենեակում տեսնուել:

Այդպէս, չը կարողանալով այդ օրը տեսնել Մասլօվային,
Նեխլիւդօվը յետ գարձաւ տուն: Ցուզուած այն մաքից, որ վա-
զը տեսնելու է նրան, Նեխլիւդօվը տուն դառնալիս յիշում էր
ոչ թէ դատարանը, այլ իր խօսակցութիւնները դատախազի և
բանտի վերակացուի հետ: Այն հանգամանքը, որ ինքը աշխա-
տում էր տեսնուել Մասլօվայի հետ ու այդ դիտաւորութիւնը
յայնեց դատախազին և նրան տեսնելու համար զնաց երկու
բանտ, այն աստիճան յուզել էր նրան, որ երկար ժամանակ նա
չէր կարողանում հանգստանալ: Տուն համենելով, նա իսկոյն հա-
նեց իր յիշատակարանը, որին վաղուց ձեռք չէր տուել, կարդաց
մի քանի տեղ նրանից ու զրեց հետեւալլ: «Երկու տարի օրա-
գիր չէի զրում և կարծում էի, թէ երբեք այլ ևս այդպիսի ե-
րեխայութիւն չեմ անի: Սակայն այդ ոչ թէ երեխայութիւն էր,
այլ զրոյց իմ սեփական անձի հետ, այն ճշմարիտ, աստուածայ-
ին «ես»-ի հետ, որ ապրում է ամեն մարդու մէջ: Ամբողջ ժա-
մանակը այդ «ես»-ս քնած էր, և ոչ ոք չը կար, որ հետը զրոյց
անէի: Նրան զարթեցրեց քնից մի արտասովոր դէմքը, որ տեղի
ունեցաւ դատարանում ապրիլի 28-ին, երբ ես երդուեալ տաե-

նակալ էի: Այդ օրը մեղադրեալների նստարանի վրայ տեսայի իմ հրապուրած կատիւշային՝ կալանաւորի խալաթով: Տարօրինակ թիւրիմացութեամբ և իմ սիսալմոնքի չնորհիւ նա դատապարտուեց տաժանակիր աշխատանքների: Այսօր դիմեցի դատախազին ու գնացի բանուը: Ինձ ներս չը թողին բանառը, բայց վճռել եմ ամենն միջոց ձեռք առնել և անպատճառ տեսնուել նրա հետ, խոստովանել մեղքս նրա առաջ և քաւել մեղքս գոնէ ամուսնանալով հետը: Տէր, օգնիր ինձ: Հոգիս ու բախ է և փառաւորւում է»:

XXXVII

Մասլօվան այդ գիշեր երկար ժամանակ չէր կարողարում քնել, այլ բայց աշքերով պառկած նայում էր գռանը, որ նրա աշքից յաճախ ծածկում էր անդադար քայլող տիրացուի աղջիկը, և մտածում էր:

Մտածում էր նա, թէ ինչ էլ լինի, չի պսակուի այնտեղ, Սախալինում մի որեէս սիրիրականի հետ, այլ մի կերպ կը ապրաքուի իշխանաւորներից մէկի հետ, գրագրի, կամ գերակացուի կամ թէ նրա օգնականի հետ: Նրանք բոլորն էլ այդ բանի համար մեռած են: «Միայն թէ չը լղարեմ: Թէ չէ կորած եմ»: Եւ նա յիշեց, թէ ինչպէս էր նայում իր վրայ պաշտպանը, ինչպէս էր նայում նախադանը, ինչպէս էին նայում դատարանում իրան պատահող և դիտմամբ մօտովը անցնող տղամարդիկ: Նա յիշեց, թէ ինչպէս թերտան, որ այցելեց նրան բանտում, պատմում էր, թէ այն ուսանողը, որին նա սիրում էր կիտայեավայի մօտ ապրելիս, եկել էր նրանց մօտ, հարցրել նրա մասին ու շատ խղճացել նրան: Յիշեց նա կօրարկեօվայի կոփւը կարմրաշէկ կնոջ հետ ու խղճաց այդ կնոջը, յիշեց հացավաճառի մասին, որ մի հատ աւելորդ հաց էր ուղարկել իրան:

Յիշեց շատ շատերին, բայց նեխլիւդօվը ամենեին միտքը չընկաւ: Նա երբէք չէր մտարերում իր մանկութիւնը, իր ջահէլութիւնը և մանաւանդ իր սէրը դէպի նեխլիւդօվը: Շատ կակըծալի էին այդ յիշողութիւնները: Նրանք անձեռնմխելի պահւում էին նրա հոգու ամենահեռաւոր խորքերում: Նոյն իսկ երազում նա երբէք չէր տեսնում նեխլիւդօվին: Դատարանում նա չը ճանաչեց նեխլիւդօվին ոչ այնքան այն պատճառով, որ վերջին անգամ նրան տեսած ժամանակը՝ նա զինուորական էր, միրուք չունէր, բեխերը փոքր էին և մազերը թէն կարձ էին, բայց խիտ ու գանգուր, իսկ այժմ միրուքով էր և տեսքն էլ ջահէլ չէր,— որքան այն պատճառով, որ ինքը երբէք չէր մտածում նրա մա-

սին իր բոլոր յիշողութիւնները իր և նրա ընդհանուր անցեալի մասին նա թաղեց այն սարսափելի, խաւար գիշերը, երբ Նեխուլիտօվը բանակից վերագանալիս չայցելեց մօրաքոյրներին:

Մինչև այդ գիշեր, նա յոյս ունէր, որ Նեխուլիտօվը կայցելի մօրաքոյրներին, և ոչ միայն չէր ճնշում, արգանդումը զաւակ զգալով, այլ, ընդհակառակը, յաճախ զարմացած խանդաղատում էր, զգալով նրա մնջմ, երբեմն և ուժգին շարժումները իր մէջ: Բայց այդ գիշերից յետոյ ամեն ինչ փոխուեց եւ ծնուելիք երեխան լոկ խոչընդուռ դարձաւ նրա համար:

Մօրաքոյրները սպասում էին Նեխուլիտօվին, զրել էին, որ անցնելիս գայ իրանց մօտ, բայց նա հեռագրեց, թէ չէ կարող, որովհետև որոշեալ ժամանակին պէտք է լինի Պետքը որդում Այդ իմանալով, Կատիւշան վճռեց գնալ երկաթուղու կայարանը նրան տեսնելու համար: Գնացքը անցնում էր գիշերուայ ժամի 2-ին: Կատիւշան սպասեց, մինչև որ օրիորդները քննեցին, և համոզելով խոհարարուհու փոքրիկ աղջկան, Մաշկային, որ իր հետ գնայ, հագաւ հին հողաթափները, զլիաշորը գցեց զլիին, փէշերը հաւաքեց և վազեց կայարան:

Աշնանային մութ, քամոտ ու անձրեային գիշեր էր: Անձրեը երբեմն սկսում էր զցել խոչոր ու տաք կաթիներով, երբեմն էլ բոլորովին դադարում էր: Դաշտում մարդու աշք չէր ջոկում ճանապարհը, իսկ անտառում այնպէս մութն էր, ինչպէս զնդանում, և կատիւշան, թէ լաւ զիտէր ճանապարհը, մոլորուեց անտառում և հասաւ փոքրիկ կայարանը, ուր գնացքը կանգնում էր միայն Յ բոպէ, ոչ թէ աւելի վաղ, ինչպէս յոյս ունէր, այլ երկրորդ զանգից յետոյ: Վազ տալով պլատֆորմը, կատիւշան իսկոյն ևեթ տեսաւ նրան առաջին կարգի վազօնի պատուհանի առաջ: Այդ վագօնը առանձնապէս վառ էր լուսաւորուած: Թաւշապատ բազմոցների վրայ երկու օֆիցիներ դէմ ու դէմ նստած թուղթ էին խաղում: Պատուհանի կողքի սեղանի վրայ վառուամ էին հալուածքով պատած հաստ մոմեր: Նա, քիփ բէյտուղներով ու սպիտակ շապկով, նստած բազմոցի կուան վրայ՝ թիկն էր տուել մէջքին և ծիծաղում էր: Նրան ճանաչելուն պէս՝ կատիւշան սառած ձեռքով թխթիւկադրեց պատուհանը: Բայց այդ ժամանակ երրորդ զանգը խփեցին և զնացքը դանդաղ կերպով շարժուեց տեղիցը մի փոքր յետ ու յետոյ վագօնները մէկ-մէկ թափահարուելով սկսեցին զնալ դէպի առաջ: Թուղթ խաղացողներից մէկը վեր կացաւ տեղիցը, թղթերը ձեռքին, ու սկսեց զուրս նայել պատուհանովը: Կատիւշան մէկ էլ թխթիւկացրեց ու երեսը կացրեց ապակուն: Այդ ժամանակ այդ վագօնն էլ թափահարուեց ու առաջ գնաց:

Կատիւշան գնաց վագօնի կողքովը, նայելով պատուհանի մէջ, Օֆիցէրը ուզում էր իջեցնել ապակին, բայց ինչ անում էր՝ չէր կարողանում: Նեխլիւդովը վեր կացաւ ու, մի կողմ հրելով օփիցէրին, սկսեց իջեցնել ապակին: Գնացքը արագացրեց ընթացքը, այնպէս որ կատիւշան արագ քայլերով էր գնում: Գրնացքը սկսեց աւելի ևս արագ գնալ և պատուհանը բացուեց: Բայց այդ միջոցին կօնդուկտորը յետ հրեց կատիւշային ու ինքը ցատկեց վագօնը: Կատիւշան յետ ընկաւ, բայց շարունակում էր վագել պլատֆորմի թաց տախտակների վրայով. յետոյ պլատֆորմը վերջացաւ և քիչ մնաց նա վայր ընկնէր՝ աստիճաններով վազէվազ իջնելով գետին: Նա վազում էր, բայց առաջին կարգի վագօնը արդէն շատ էր առաջ ընկել: Նրա կողքով սլանում էին երկրորդ կարգի վագօնները, յետոյ աւելի ևս արագ սկսեցին սլանալ երրորդ կարգի վագօնները, բայց նա էլի վազում էր ու վազում: Երբ սրացաւ անցաւ վերջին լապտերաւոր վագօնը, նա արդէն անցել էր բոլոր շէնքերից այն կողմը և քամին, որի առաջ չը կար այլ ևս ոչ մի պատուար, յարձակուեց նրա վրայ, ուզելով թոցնել դիմի շորը և մի կողմից կոլոլելով նրա ոտները հագուստի մէջ: Գլխի շորը տարաւ քամին, բայց նա էլի շարունակում էր վազել:

—Մօքքոյը,—գոռում էր փոքրիկ աղջիկը, հազիւ հազ հասնելով նրա յետելից: —Գլխի շորը կորցրեցիք:

Կատիւշան կանդ առաւ և, գլուխը յետ գցելով ու ձեռներով բանելով, սկսեց հեկեկալ:

—Գնաց, —աղաղակեց նա:

«Նա այն փառաւոր վագօնում իր համար թաւշապատ բազմոցի վրայ նստած կատակներ է անում ու խմում, —իսկ ես այստեղ, այս ցեխով ու մթնով, այս անձրեսով ու քամով, կանգնած լալիս եմ», —մտածեց նա ինքն իրան ու նստեց գետնին և սկսեց այնպէս բարձրաձայն հեկեկալ, որ փոքրիկ աղջիկը վախեցաւ ու փաթթաթուեց նրա թաց հագուստին:

—Տուն գնանք, մօքքոյ:

«Կը սպասեմ, երբ որ գնացքը անցնի, տակը կ'ընկնեմ ու ամեն ինչ կը վերջանալ», —մտածում էր այդ միջոցին կատիւշան, պատասխան չը տալով աղջկան:

Նա վճռեց այդպէս անել: Բայց հէնց այդ ժամանակ, ինչպէս սովորաբար լինում է յուզմունքից յետոյ հանգստութեան առաջին բոպէին, երեխան, որ նա կրում էր իր մէջ, յանկարծ խաղաց, դիմաց նրա արգանդին, խլպատաց ու նորից դիմաւ, իբրև մի բարակ, սուր ու քնքոյշ բան: Եւ յանկարծ անհետացաւ այն բոլորը, ինչ-որ մի բոպէ առաջ այն աստիճան տան-

ջում էր նրան, որ թւում էր, թէ այլ ևս չէ կարող ապրել, անհետացաւ Նեխլիւդօվի զէմ զգացած ամբողջ զայրոյթը և գոնէ իր մահովը նրանից վրէժ հանելու ցանկութիւնը, նա հանգստացաւ, վեր կացաւ, դրասուեց, զլխաշորը կապեց ու յետ գնաց:

Նա վերադարձաւ տուն ջարդուած, թրջուած ու ցեխուած, և այդ օրից նրա մէջ սկսուեց այն հոգեկան յեղաշրջումը, որի չնորհիւ նա դարձաւ այն, ինչ որ էր այժմ: Այդ սարսափելի զիշերից սկսած նա այլ ևս չէր հաւատում Աստուծուն ու բարին: Առաջ նա հաւատում էր Աստուծուն և կարծում էր, թէ մարդիկ առհասարակ հաւատում են Աստուծուն, բայց այդ զիշերից ի վեր համոզուեց, որ ոչ ոք չի հաւատում նրան և այն բոլորը, ինչ որ ասում են Աստուծուն մասին և նրա օրէնքի մասին, խարէութիւն է և անարդարութիւն: Այն մարդը, որին ինքը սիրում էր և որ իրան սիրում էր, — նա այդ զիտէր, — թողեց նրան ու հեռացաւ, պղծելով ու ծաղրելով նրա զգացմունքները: Իսկ այդ մարդը ամենալաւան էր իր ճանաչած մարդկանց մէջ: Միւսները բոլորը աւելի ևս վատ էին: Եւ այն ամենը, ինչ որ պատահեց Կատիւշային գրանից յետոյ, ամեն քայլափոխում հաստատում էր այդ բանը: Նեխլիւդօվի մօրաքոյները, այդ բարեպաշտ պառաւները, գուրս արեցին նրան, երբ նա այլիս չէր կարող ծառայել նրանց, ինչպէս առաջ Ում որ պատահում էր, կանաքը՝ աշխատում էին նրա միջոցով փող ձեռք զցել, իսկ տղամարդիկ, ծերունի ստանօվօյից սկսած մինչև բանտավին վերակացուները, նայում էին նրա վրայ միմիայն իրեւ գուարձութեան առարկայի վրայ: Եւ ոչ ոքի համար ոչ մի ուրիշ բան չը կար աշխարհում: Դրանում նրան աւելի ևս համոզեց այն ծերունի գրողը, որի հետ նա կապուեց իր ազատ կեանքի երկրորդ տարին: Այդ գրողը ուղղակի ասում էր, թէ գրանումն է մարդու երջանկութիւնը, անուանելով, սակայն, այդ բանը՝ բանաստեղծութիւն և գեղեցկազիտութիւն:

Ամենը ապրում էին լոկ իրանց անձի, իրանց զուարձութեան համար, և այն բոլորը, ինչ որ ասում էին Աստուծուն և բարիի մասին, խարէութիւն էր միայն: Իսկ եթէ երբեմն-երբեմն հարցեր էին ծագում, թէ ինչու ամեն ինչ այնպէս վատ է կարգաւորուած աշխարհում, որ ամենը չարիք են պատճառում միմնանց և ամենքն էլ տանջւում, — պէտք էր աշխատել չը մտածել այդ բանի մասին: Երբ որ սիրաը նեղանում էր, պէտք է ծխէր, խմէր կամ, աւելի ևս լաւ, սիրուէր մի որևէ տղամարդու հետ և սրսնեղութիւնը իսկոյն կ'անցէր:

XXXVIII

Հետեւալ օրը, կիրակի, առաւօտեան ժամի 5-ին, երբ բանտի կանանց մասի միջանցքում լուսեց սովորական սուլոցը, Կորարինօվան, որ արդէն զարթուն էր, զարթեցրեց Մասօվային:

«Սիրիք եմ քշուած», սարսափով մոտածեց Մասօվան, արուրելով աչքերը ու ակամայ ներս նշելով սենեակի օղը, որ առաւօտուայ դէմ սարսափելի զարշահոտ էր զարձել, և ուղեց նորից քնել, խորասուղուել անդիտակցական աշխարհը, բայց վախի սովորութիւնը յաղթեց քնին և նա վեր կացաւ ու ծալապատիկ նստած սկսեց նայել չորս կողմը: Կանայք արդէն վեր էին կացել, միայն երեխաներն էին մնացել քնած: Գորտի աչքերով կալանաւորուհին, որ բոնուել էր գաղտնի օղի վաճառելու համար, զգուշութեամբ, աշխատելով չը զարթեցնել երեխաներին, տախներիցը գուրս էր քաշում խալաթը: Ապստամբութեան համար մեղադրուած կալանաւորուհին վառարանի մօտ փռում էր պարուրի տեղ ծառայող փալամսերը, իսկ երեխան, ձայնը գլուխը ցցած, լալիս էր կապտաչեայ Ձերդոսեայի գրկում, որ օրօրւում էր նրա հետ ու քնքոյշ ձայնով նանիկ ասում նրան: Թոքախտաւոր կալանաւորուհին, կուրծքը բռնած ու արիւնը երեսը տուած, աշխատում էր խուխը գուրս ըերել հաղալով և երբեմն-երբեմն բարձրաձայն հառաչում էր, գրեթէ ճշալով: Կարմրաշէկ կալանաւորուհին զարթուն պառկած էր տեղերում, փորս դէպի վեր ու հաստ սաները ծալած, ու բարձրաձայն և ուրախ-ուրախ պատմում էր գիշերը տեսած երազը: Հրկիզութեան համար մեղադրուած պառաւը զարձեալ կանգնած էր սրբի պատկերի առաջ և, շնչալով միհնոյն խօսքերը, խաչ էր անում երեսին ու ծունը գնում: Տիրացուի աղջիկը անշարժ նստած էր տախտի վրայ ու քնկուտ, բութ հայեացքով նայում էր գէպի առաջ: Խօրօշավկան ոլոր էր ցցում մատի շուրջը իւղու և կոշտ ու սև մազերը:

Միջանցքում լսուեց ոտնամանների քաքսոց, կողպէքը զբնգաց և ներս մտան երկու աղբաթափ կալանաւորներ, բաճկաններով և պճեղներից շատ բարձր վերջացող կարճ ու մոխրագոյն փարտիքներով, և լուրջ ու բարկացած դէմքով ձողը անց կացրին զարշահոտ կոնքի ունկերի մէջ ու, բարձրացնելով, դուրս տարան սենեակից: Կանայք դուրս եկան միջանցքը ու սկսեցին լուացուել ջրի փողորակների մօտ: Լուացուելիս կոիւ ծագեց կարմրաշէկ կալանաւորուհու և մի ուրիշի մէջ, որ դուրս էր եկել կողքի սենեակից: Դարձեալ հայհոյանք, աղմուկ ու գանգատ...

— Ի՞նչ է, կարցէրին կարօտել էք, — գոռաց վերակացուն
և այնպէս խփեց կարմրաշէկ կալանաւորուհու մերկ ու գէր մէջ-
քին, որ շըպպոցը լսուեց ամբողջ միջանցքում: — Ել ձայնդ չը-
լսեմ:

— Տես, ի՞նչպէս է զըզդնել պառաւ չունը, — ասաց կարմրա-
շէկ կալանաւորուհին, իր գգուանք ընդունելով այդ վարմունքը:

— Դէ, շուտու Կորէք, զնացէք պատարագի:

Մասլօվան մազերը սանրեց պրծաւ թէ չէ, եկաւ բան-
տապետը իր հետեւորդներով:

— Կանդնեցէք տեղներդ, — գոռաց վերակացուն:

Միւս սենեակից ուրիշ կալանաւորուհիներ էլ գուրս եկան
և բոլորը երկ-երկու կարգ շարուեցին միջանցքի երկարու-
թեամբ և յետսի կարգի կանդնողները ձեռները դրեցին առաջին
կարգում կանդնողների ուսին: Բոլորին հաշուեցին:

Հաշուելուց յետոյ եկաւ վերակացուհին ու կալանաւորուհի-
ներին տարաւ եկեղեցի: Մասլօվան ու ֆեղեսսեան գտնուում էին
ամբողջ շարքի մէջ տեղում, որ բաղկացած էր բոլոր սենեակներից
զուրս եկած հարիւրի չափ կանանցից: Բոլորն էլ սպիտակ զլիաւ-
չորով էին, սպիտակ բաճկոնով ու շրջազգեստով և միայն եր-
բեմն-երբեմն նրանց մէջ պատահում էին իրանց սեփական գու-
նաւոր զգեստները հագած կանացի: Այդ այն կանացը էին, որոնք
կալանաւորուհի չէին, այլ իրանց կամքով Սիրիք էին գնում
իրանց դատապարտուած ամուսինների հետ: Ամբողջ սանդուխը
բռնուած էր այդ շարժուն շարանով: Լսուում էր բանտային ոտ-
նամաններ հագած ոտների փափուկ թիթիփոյ, խօսակցութեան
ձայն, երբեմն և ծիծագ: Երբ պտոյտ էին տալու, Մասլօվան
տեսուա իր թշնամուն, Բօչիօվային, որ առջևում զնում էր իր
չար դէմքով, ու ցոյց տուեց հեղուանալին: Խջնելով ներքեւ, կա-
նացք լոեցին ու սկսեցին, երեսներին խաչ անելով ու ծունը
զնելով, ներս մտնել սոկեշող և գեռ դատարկ եկեղեցին, որի
դուռը բաց էր Նրանց անզը աջ կողմումն էր և նրանք
սկսեցին տեղաւորուել, հրհրելով իրար ու սղմուելով մի-
մանցու կանանցից յետոյ ներս մտան տարագրուող, բան-
տարկեալ և գիւղական համայնքների վճռով պասորի ենթար-
կուած կալանաւորները, մոխրագոյն խալաթներով, և բար-
ձրածայն հազարով խիտ առ խիտ շարուեցին եկեղեցու ձախ
կողմում ու մէջ տեղում: Խակ վերեսում, վերնատանը, ար-
գէն կանդնած էին ուրիշ կալանաւորներ, որոնց առաջուց էին
բերել: — մի կողմում կիսով չափ ածիլուած զլուխներով տաժա-
նապարտները, որոնք իրանց ներկայութիւնը զգալ էին տալիս

շդթաների զբնգոցով, և միւս կողմում՝ դատի տակ գտնուող կա-
լանաւորները, որոնք ոչ ածիլուած էին, ոչ շդթայուած:

Բանտի եկեղեցին, որ, մի քանի տասնեակ հազարներ ծախ-
սելով, նոր շինել ու զարդարել էր մի հարուստ վաճառական,
փողիողում էր ներկերի վառ գոյնից ու ոսկուց:

Մի փոքր ժամանակ լռութիւն էր տիրում եկեղեցում և
լրում էր միայն խնձելու և հազարու ձայն, մանր երեխաների
ճչոց և երբեմն շդթաների շառաչիւն: Բայց ահա մէջ տեղի կա-
լանաւորները իրար սզմուելով ճանապարհ բաց արին արանգում
և, այդ ճանապարհով անցնելով, եկեղեցու մէջ տեղում, ամենքի
տուաշին, կանգնեց բանտապետը:

Ժամասացութիւնը սկսուեց:

XXXIX

Նեխլիւդօվը առաւօտեան վաղ դուրս եկաւ տանից: Փո-
ղոցով գեռ նոր էր անցնում գիւղացի կաթնավաճառը, որ
տարօրինակ ճայնով գոռում էր.

—Կաթ առնող, կաթ առնող, կաթ առնող:

Նախընթաց օրը առաջին տաք գարնանային անձրեն էր
եկել Ամեն տեղ, ուր սալայատակ չը կար, յանկարծ կանաչել էր
խոտը. պարտէ զներում կէշիները ծածկուել էին կանաչ աղուա-
մազով, և թխենիներն ու կաղամախները պարզել էին իրանց
երկար ու անուշաբոյր տերեները, իսկ աներում ու խանութիւնե-
րում մաքրում էին պատուհանները և հանում կրկնակի շրջա-
նակները: Շուկայում, որի մօտով անց կացրեց կառապանը
Նեխլիւդօվին, շարէշար վրանների շուրջը վիտում էր խուռն
ամբոխ և անց ու դարձ էին անում գզգզուած շորերով շրջիկ
մանրավաճառներ, ծախու կօշիիները կռնատակերին և արդու-
կած անդրավարտիքներն ու ժիլէտները ուսներին:

Տրակտիքների մօտ արդէն խոնուում էին գործարանական
բանաւորներ, տղամարդիկ՝ մաքուր բաճկոններով ու փայլուն
կօշիկներով, իսկ կանայք՝ մետաքսէ վառդոյն գլխաշորերով և սև
յուլուններով զարդարուած վերարկուներով: Փողոցային ոս-
տիկանները, ատրճանակների գեղնագոյն գերձանները վզներովը
գցած, կանգնած էին իրանց տեղերում, դարանելով անկարգու-
թիւններ, որոնք կարող էին ցրուել նրանց տանջող տաղտկու-
թիւնը: Բուլվարների ճեմելիքներում և նոր կանաչած սիզա-
մարդերում վազգում էին ու խաղում երեխաներ ու չներ, իսկ
նստարանների վրայ նստած զրոյց էին անում ուրախ ու զուարթ
յղաեակները:

Փողոցներում, որոնց ձախ կողմը, որ դեռ ստուերի մէջ էր, թաց էր ու զով, իսկ մէջ տեղը՝ արդէն չորացած, անընդհատ լսուում էր ձիաքարչի զնզգնգոցը, ապրանքատար ժանր սայլերի գլորդոցը և միաձի թեթև կառքերի գոգացը, Ամեն կողմից օղը գողդողում էր զանազանակերպ զանգանարութիւնից և զօղանչիւնից, որով եկեղեցիների զանգերը հրաւիրում էին ժողովրդին ներկայ լինել նոյնպիսի ժամասացութեան, որպիսին այժմը կատարուում էր բանտում: Եւ զուգուած-զարդարուած ժամաւորները գնում էին ամենքը իրանց ծխական եկեղեցին:

Կառապանը վայր բերեց Նեխլիւդովին, դեռ բանտը չը հասած, փողոցի այն պտուտանքում, որ տանում էր դէպի բանտը:

Մի քանի հոգի: տղամարդ ու կին, մեծ մասամբ կապոցներով, կանգնած էին այդ նոյն տեղում, բանտից հարիւր քայլաչափ հեռու: Աջ կողմում փայտէ ցածր շնութիւններ էին, ձախ կողմում՝ մի երկարկանի տուն՝ ինչ որ ցուցանակավիթանտի բուն քարէ շէնքը առջևումն էր և այցելուներին չէին թողնում այն կողմը գնալ: Պահապան զինուորը, հրացանը ձեռքին, յետ ու առաջ էր գնում, խիստ ձայնով գուալով այն մարդկանց վրայ, որոնք ուղղում էին կողքով անց կինալ:

Փայտէ շնութիւնների գանակի մօտ, աջ կողմից, պահապան զինուորի դէմ ու դէմում, նստարանի վրայ նստած էր վերակացուն երիգաղարդ շքազգեստը հագին և մի տեսրակ ձեռքին: Այցելուները մօտենում էին նրան, ասում էին, թէ ում են ուղում տեսնել, և նա զրի էր անցնում: Նեխլիւդովին էլ մօտեցաւ նրան ու տուեց եկատերինա Մասլօվայի անունը: Երիգաղարդ վերակացուն գրեց տեսրակում:

— Ինչու գեռ ներս չեն թողնում,—հարցրեց Նեխլիւդովը:

— Պատարագ կայ եկեղեցում: Պատարագը որ դուրս գայ, ներս կը թողնեն:

Նեխլիւդովը յետ քաշուեց դէպի սպասողների խումբը, Բազմութիւնից առաջ եկաւ և ուղղուեց դէպի բանտը ամրող երեսը կարմիր շերտերով ծածկուած մի մարդ, զզզզուած շրերով, ճմուռած զլխարկով և բորբկ ոտներին քրքրած կօշիկներ հազած:

— Ո՞ւր ես խցկուում,—գոռաց նրա վրայ հրացանակիր դիւնուորը:

— Դու ինչու ես բղաւուում,—առանց ամենեին շփոթուելու զինուորի գոռացից, պատասխանեց զզզզուած մարդը ու յետ դարձաւ, — չես թողնում, չիմ գնալ: Թէ չէ այնպէս է գոռում, կարծես երանալ լինի:

Բազմութեան մէջ լսուեց հաւանութեան ծիծաղ: Այցելու-

Ները մեծ մասամբ վատ հագնուած և նոյն իսկ գգգգուած մարդկիկ էին, բայց մէջները կային և վայելուչ հագուստով կանաքը ու տղամարդիկ։ Նեխլիւդօվի կողքին կանգնած էր լաւ հագնուած, ամբողջ դէմքը ածիլած, լիքը-լիքը ու կարմրերես մի մարդ, որ ձեռքին բռնած ունէր մի կապոց, երեխ սպիտակեղեն նովի Նեխլիւդօվը հարցրեց նրանից, արդեօք առաջին անգամն է այդտեղ լինում: Կապոցաւոր մարդը պատասխանեց, որ ինքը ամեն կիրակի գալիս է բանալը, և նրանք սկսեցին խօսել: Դա մի բանկի դրսապան էր և եկել էր այցելելու իր եղբօրը, որ դատւում էր կեղծարարութեան համար: Այդ բարեհոգի մարդը պատմեց Նեխլիւդօվին իր ամբողջ պատմութիւնը և ուզում էր նրանից էլ հարց ու փորձ անել, բայց այդ ժամանակ նրանց ուշադրութիւնը գրաւեցին մի ուսանող ու քօղքաւոր մի կին, ուրնք մօտեցան նրանց ոչ զինաւոր միաձի կառքով, որին լծուած էր մի տոհմիկ սև նժոյգ: Ուսանողի ձեռքին մի մեծ կապոց կար, և ա մօտեցաւ Նեխլիւդօվին հարցրեց—կարելի՞ է արդեօք և ինչպէս պէտք է տալ կալանաւորներին իրանց բերած ողորմութիւնը, հացերը: «Եշանածիս ցանկութեամբն եմ անում: Այս իմ նշանածն է: Ծնողները խորհուրդ տուեցին հաց բերել կարանաւորներին»:

—Ես ինքս էլ առաջին անգամն եմ այստեղ ու չը գիտեմ ինչպէս պէտք է անել, բայց կարծում եմ, որ պէտք է այս մարդուց հարցնել,—ասաց Նեխլիւդօվը ցոյց տալով աջակողմում տեարակը ձեռքին նստած երիզազարդ վերակացուի վրայ:

Այն միջոցին, երբ Նեխլիւդօվը խօսում էր ուսանողի հետ, բանափ երկաթէ մեծ դուռը, որի մէջտեղում փոքրիկ պատուհան էր շնուրած, բացուեց և բանտից դուրս եկաւ մի շքազգեստաւոր օֆիցէր մի ուրիշ վերակացուի հետ, և տեսրակաւոր վերակացուն յայտնեց ամենքին, որ ներս են թողնում այցելուներին: Պահապան զինուորը մի կողմ քաշուեց, և բոլոր այցելուները, կարծես վախենալով ուշանալ, արագ քայլերով, ոմանք նոյն իսկ վազէվազ, զիմեցին դէսի բանափ դուռը: Դըսան մօտ կանգնած էր վերակացուներից մէկը, որ՝ այցելուները անցնելիս՝ համարում էր նրանց, բարձրաձայն արտասաներով 16, 17 և այլն: Միւս վերակացուն, շնուրեթեան ներսում, ձեռքով չօշափելով ամեն մի անցնողի, կրկին համարում էր նրանց հետեւեալ դռնով ներս մտնելիս, որպէս զի դուրս թողնելիս, հաշիւը ստուգելով, ոչ մի այցելուի չը թողնի բանտում և ոչ մի կալանաւորի բաց չը թողնի բանտից: Այդ համարովը, չը նայելով անցնողների երեսին, Նեխլիւդօվի մէջքին էլ խփեց ձեռքով, և վերակացուի ձեռքի այդ հպումը առաջին բոպէին վի-

բաւորական թուաց Նեխլիւդօվին, բայց նա իսկոյն մտարերեց, թէ ինչու է եկել այդտեղ, և ամաչեց այդպիսի անախորժութիւն ու վիրաւորանք զգալուն համար:

Դանից անմիջապէս յետոյ գտնուում էր մի մեծ կամարաւոր սենեակ, փոքրիկ վանդակապատ պատուհաններով: Այդ սենեակում, որ հաւաքարան էր կոչում, Նեխլիւդօվը տեսաւ իշաշկութեան պատկերը մի դարակում:

Նեխլիւդօվը գնում էր գանդաղ քայլերով, ճանապարհ տալով շտապով այցելուներին և միաժամանակ զգալով՝ սարսափ այն չարագործներից, որոնք կալանաւորուած են այդտեղ, կարեկցութիւն՝ դէպի այն անմեղ անձինք, որոնք, ինչպէս երէկուան պատանին ու կատիւշան, ստիպուած են մնալ այդտեղ, և ամօթ ու խանդաղատանք առաջիկայ տեսակցութիւնից: Առաջին սենեակից դուրս գալու ժամանակ, սենեակի միւս ծայրում, վերակացուն մի բան ասաց: Բայց Նեխլիւդօվը, խորասուզուած իր մտածմունքների մէջ, ուշ չը դարձեց այդ բանին եւ չարունակեց գնալ այն կողմը, ուր գնում էր այցելուների մեծ մասը, այսինքն տղամարդկանց բաժանմունքը, մինչդեռ նրան պէսք էր գնալ կանանց բաժանմունքը:

Շտապովներին ճանապարհ տալով, նա վերջինը մտաւ տեսսակցութեան համար նշանակուած սենեակը: Երբ, դուռը բանալով, ներս մտաւ այնտեղ, նա մնաց ապշած, լսելով մի խացուցիչ ժիսոր, որ առաջանում էր հարիւրաւոր ձայների միախառնութիւնից: Բանի էութիւնը նա հասկացաւ միայն այն ժամանակ, երբ աւելի ևս մօտեցաւ այցելուներին, որոնք, չափարի վրայ կիտուած ճանձների նման, կալել էին սենեակը երկու մասի բաժանուող ցանցապատիցը: Այդ սենեակը, որ լուսամուտներ ունէր յետել պատում, երկու մասի էր բաժանուած երկու հատերկաթաթել ցանցերով, որոնք առաստաղից ձգւում էին մինչև յատակը: Ցանցապատերի արանքում գնում գալիս էին վերակացուները: Ցանցապատերի միւս կողմում կանգնած էին կալանաւորները, այս կողմում այցելուները: Սրանց ու նրանց անջատում էին իրարից երեք արշին արանք ունեցող ցանցապատերը, այնպէս որ անկարելի էր ոչ միայն որ և է բան տալ իրար, այլ և լաւ տեսնել դէմքերը, մանաւանդ կարճատես մարդու համար: Դըժուար էր նաև խօսել, ասածը լսուելու համար պէտք էր գոռալ ամբողջ ոյժով: Երկու կողմից էլ կանալք, այրեր, հալրեր, մայրեր ու երեխաներ երեմները հուլ էին տուել ցանցերին, այխատելով տեսնել իրար և ասել ինչ որ ասելիք ունէին: Բայց որովհետեւ ամեն մարդ աշխատում էր այնպէս խօսել, որ խօսակիցը լսէր, իսկ կողքի հարևանները, նոյնը ուղելով, խանգարում էին

նրան, ուստի իւրաքանչիւրը աշխատում էր իր ձայնով խեղդել ուրիշի ձայնը: Դրանից էր առաջանում աղաղակներով ընդհատուող այն ժամը, որ զարմացրեց Նեխլիւդօվին, սենեակը մտնելիս: Բոլորովին անկարելի էր հասկանալ, թէ ինչ են ասում: Միմիայն դէմբերիցը կարելի էր դատել, թէ ինչ են ասում և ինչ յարաբերութիւններ կան խօսակիցների մէջ: Նեխլիւդօվի Կողքին կանգնած էր գլխին շոր կապած մի պառաւ, որ, ցանցին սղմուած, դողդոջուն կզակով ինչ որ գոռում էր մի ածիլուած կիսադիմով գունատ երիտասարդի: Կալանաւորը ուշադրութեամբ լսում էր նրա ասածը, յօնքերը բարձրացրած ու ճակատը կնճռած: Պառաւի կողքին կանգնած էր հասարակ հագնուած մի երիտասարդ, որ, գլուխը թափ տալով, լսում էր այն խօսքերը, որ ասում էր նրան նմանող մի կալանաւոր, ցաւատանջ դէմքով ու սպիտակող միրուքով: Աւելի հեռու կանգնած էր մի զզզզուած մարդ, որ ինչ որ գոռգոռում էր ու ծիծաղում, թափ տալով ձեռքը: Իսկ նրա կողքին, յատակի վրայ, երեխան գրկին, նստած էր լաւ բրդէ գլխաշորով մի կին, որ հեկեկում էր, անշուշտ առաջին անգամ կալանաւորի հագուստով, ածիլուած գլխով ու շղթայակապ տեսնելով այն աշխոր մարգուն, որ կանգնած էր ցանցապատի միւս կողմում: Այդ կնոջ գլխակիերեսում այն գոնապանը, որի հետ մի փոքր առաջ խօսում էր Նեխլիւդօվը, որքան ուժումը կար՝ գոռում էր իր դէմ ու դէմը կանգնած ճաղատ գլխով ու փայլուն աչքերով կալանաւորին:

Նեխլիւդօվը մի հինգ րոպէ ֆնաց այդ սենեակում, զզալով ինչ որ տարօրինակ թափիծ, գիտակցելով իր անզօրութիւնը և իր կտրուածութիւնը ամբողջ աշխարհից. նրան տիրել էր այնպիսի հոգեկան տրամադրութիւն, ինչպէս մարդ զգում է նաւակուծութեան ժամանակ:

«Սակայն պէտք է անել այն բանը, ինչի համար որ եկել եմ այստեղ,—ասաց նա մտքումը, քաջալերելով ինքն իրան:— ի՞նչպէս պէտք է անել»:

Նա սկսեց աչքերով վնասուել որ և է իշխանաւորի և տեսնելով մի կարճահասակ, նիհար ու բեխաւոր պարոնի, որ՝ օֆիցերական ուսնողները ուսին՝ պտտում էր այցելուների յետեւում, դիմոց նրան.

—Զէք կարող արգեօք, պարոն, ասել ինձ,—հարցրեց նա սասափի նուրբը քաղաքավարութեամբ,—որտեղ են պահւում կանագը և որտեղ կարելի է տեսնուել նրանց հետ:

—Միթէ ձեղ կանանց բաժանմունքն է պէտք:

—Այո, ես կ'ուզէի տեսնել կալանաւոր կանանցից մէկին,—

Նոյնպիսի ծայրայեղ քաղաքավարութեամբ պատասխանեց Նեխ-
լիւդօվը:

—Այդպէս էլ կ'ասէլք հաւաքարանում եղած ժամանակը—
Ում էք ուզում տեսնել:

—Եկատերինա Մասլովյան:

—Նա դատապարտուած է արգէն:

—Այո, երէկ չէ անցեալ օրը դատապարտուեց,—հլու կեր-
պով պատասխանեց Նեխլիւդօվը, վախենալով յանկարծ փչացնել
բանտապետի տրամադրութիւնը, որ կարծես համակրութեամբ
էր վերաբերում նրան:

—Եթէ կանանց բաժանմունքն էք ուզում, եկէք այս կող-
մը,—ասաց բանտապետը, անշուշտ վճռելով, Նեխլիւդօվի ար-
տապինով, թէ նա արժանի է ուշադրութեան:—Սիզօրով,—դի-
մեց նա մեդալակիր ու բեխաւոր ունաէր-օֆիցէրին,—այս պա-
րոնին տար կանանց բաժանմունքը:

—Լսում եմ:

Այդ ժամանակ ցանցապատի մօտ լսուեց այցելուներից
մէկի աղէկտուր հեկեկանքը:

Այդ բոլորը տարօրինակ էր թւում Նեխլիւդօվին և ամենից
տարօրինակ էր թւում նրան այն բանը, որ ինքը չնորհակալու-
թիւն էր յայտնում և իրան պարտաւորուած զգում բանտապե-
տին և գլխաւոր վերակացուին:

Վերակացուն Նեխլիւդօվին տղամարդկանց այցելարանից
դուրս բերեց միջանցքը և իսկոյն, գէմուդէմի դռնով, տարաւ
կանանց այցելարանը:

XL

Այդ սենեակը, տղամարդկանց այցելարանի պէս, երկու ցան-
ցապատով բաժանուած էր երեք մասի, բայց նրանից շատ փոքր
էր և այցելուներ ու կալմնաւորներ էլ այդտեղ աւելի քիչ կային: Սակայն գոռգոռոցն ու աղմուկը նոյնքան սաստիկ էր, որքան և
տղամարդկանց սենեակում: Այդտեղ էլ ցանցապատների արանքին
ման էր գալիս իշխանաւորը: Այդտեղի իշխանաւորը վերակա-
ցուհին էր, երիզազարդ թեքերով ու կապոյտ ժապաւէններով հա-
մազդեստը հազին և վերակացուների գօտիի նման գօտի մէջքին:
Եւ բոլորովին այնպէս, ինչպէս տղամարդկանց այցելարանում,
երկու կողմից մարդիկ կացրել էին երեսները ցանցապատին,—
այս կողմից քաղաքացի բնակիչներ զանազան տեսակ հագուստ-
ներով, այն կողմից՝ կալանաւորուհիներ, ոմանք սպիտակ, ոմանք
էլ իրանց սովորական հագուստներով: Ամբողջ երկարութեամբ,

ցանցը ծածկուած էր մարդկանցով։ Մի քանիսը բարձրացել էին ոտների ծայրի վրայ, որպէս զի ձայները լսելի լինէին ուրիշների գլխավերնից, մի քանիսն էլ յատակի վրայ նստած էին իօսակցում։

Բոլոր կալանաւորուհիների մէջ, թէ իր ծղրտան ձայնով և թէ իր տեսքով, ամենից շատ աչքի էր ընկնում՝ գանգուր մազերի վրայից գլխաշորը վայր իջած, մի փրչոտ ու նիհար գնչուհի, որ, ցանցապատի միւս կողմում, սենեակի գրեթէ մէջտեղում, սինի մօտ կանգնած, ձեռները արագ-արագ շարժելով ու գոռզուալով ինչ որ մի բան էր ասում կապոյտ սիւրտուկ հագած և ցածրահան ու պինդ գօտեւորուած մի ցիգանի։ Ցիգանի կողքին մի զինուոր, գետնին պազած, խօսում էր կալանաւորուհիներից մէկի հետ։ Նրանից գէնը, ցանցապատին կպած, կանգնած էր մի շէկ միրուքով ու կարմրատակած երեսով տրեխաւոր երիտասարդ գեղջուկ, որ, ինչպէս պարզ երևում էր, հազիւ հազ էր պահում արտասուբները։ Նրա հետ խօսում էր, իր բաց-կապտագոյն աշքերով նայելով նրան, մի սիրունատես շիշկաներ կալանաւորուհի։ Ֆեղոսեան ու իր մարդն էին այդ։ Նրանցից այն կողմը կանգնած խօսակցում էին մի գգգուած շորերով այցելու և մի շիքրթ հագնուած ու լայներես կալանաւորուհի։ Այնունեան երկու կին, մի տղամարդ, մի կին և ամենքի դիմացը մի-մի կալանաւորուհի։ Մասլօվան չը կար կալանաւորուհիների մէջ, Բայց նրանց յետեւում, այն կողմում, մի կին էլ կար կանգնած, և Նեխլիւդովը իսկոյն և եթ հասկացաւ, որ այդ նա է, և իսկոյն և եթ զգաց, թէ ինչպէս իր սիրտը սկսեց սաստիկ խփել և շունչը բռնուեց։ Վճռական բոպէն մօտենում էր։ Նա մօտեցաւ ցանցին և ճանաչեց, որ կատիւշան էր։ Կապտաշեայ ֆեղոսեայի յետեւում կանգնած, կատիւշան ժպտում էր, լսելով նրա խօսածը։ Նա խալաթով չէր, ինչպէս նախանցեալ օրը, այլ սպիտակ բածկոնով, որ քիփ հուալ էր տուած գօտիով և բարձր ցցուել էր կրծքի վրայ։ Գլխաշորի տակից, ինչպէս և դատարանում, երեւում էին սև ու գանգուր մազերը։

«Եյս բոպէս կը վճռուի ամեն ինչ—մտածում էր Նեխլիւդովը։—Ի՞նչպէս կանչեմ։ Թէ գուցէ ինքը կը մօտենայ։»

Բայց կատիւշան չէր մօտենում։ Նա սպասում էր կարային և ամենեին չէր մտածում, թէ այդ մարդը իրան տեսնելու համար է եկնլ։

—Ում էր ուզում,—մօտենալով Նեխլիւդովին հարցրեց ցանցապատների արանքում ման եկող վերակացուհին։

—Կատերինա Մասլօվային,—հազիւ հազ կարողացաւ արտասանել Նեխլիւդովը։

—Մասլովա, քեզ են ուզում, —գոռաց վերակացուհին

Մասլովան յետ նայեց ու բարձրացնելով զլուխը ու դուր ցցելով կուրծքը, Նեխլիւդօվին վաղուց ծանօթ պատրաստականութեան արտայայտութեամբ մօտեցաւ ցանցապատին, ծանապարհ բանալով երկու կալանաւորուհիների մէջ, և զարմացական ու հարցական հայեացքը յառեց Նեխլիւդօվի վրայ, չը ճանաչելով նրան:

Բայց հազուսոիցը դատելով, որ հարուստ մարդ պէտք լինի, ժպտաց:

—Ի՞նչ էք ուզում, —ասաց նա, մօտեցնելով ցանցապատի իր շիլ աչքերն ու ժպտուն երեսը:

—Ես ուզում էի տեսնել... —Նեխլիւդօվը չը զիտէր՝ «ղուզի խօսէր թէ «գուք»-ով, բայց վճռեց «գուք»-ասել: Նա խօսուէր սովորականից ոչ բարձր ձայնով, —Ես ուզում էի տեսնել ձեզ... ես...

—«Նազլիներ մի պատմի», —գոռում էր կողքին զզզզուայցելուն: —«Վերցրել ես թէ չէ»:

—«Չեպքից բոլորովին գնացել է, շատ թոյլ է...» —գոռում էր մի ուրիշը միւս կողմից:

Մասլովան չէր կարողանում լսել Նեխլիւդօվի ասածը բայց այն արտայայտութիւնը, որ խօսելու ժամանակ երեսուէր նրա դէմքի վրայ, յանկարծ յիշեցրեց կատիւշային այն ըանը, որ նա չէր ուզում մտաբերել, և ժպիտը յանկարծ չքացաւ երեսից ու ճակատի վրայ երեաց մի ցաւատանջ կնճիռ:

—Չեմ լսում ինչ էք ասում, —գոչեց նա, աչքերը պլչելու աւելի ու աւելի կնճուելով ճակատը:

—Ես եկել եմ...

«Այս, այսպէս եմ վարւում, ինչպէս պէտք է, խոսափանում եմ մեղքս», մտածեց Նեխլիւդօվը:

Եւ այդ մտածելուն պէս, արտասուքը լցրեց աչքերը, սրդմեց կոկորդը, և նա, մատներով բռնելով ցանցից, լսեց, ճիթափելով հեկեկանքը զսպել:

—«Եթէ առողջ լինէր, ես չէի գնայ», —գոռում էին մկողմից:

—«Աստուած վկայ, անգէտ եմ այդ բանից», —գոռում էր միւս կողմի կալանաւորուհին:

Մասլովան նկատեց Նեխլիւդօվի յուզմունքը և այդ յուզմունքը հաղորդուեց և նրան, —աչքերը փայլատակեցին, սպիտակ ու թխլիկ թշերը պուտ-պուտ կարմրեցին, բայց դէմքէլի խիստ արտայայտութիւն ունէր և շիլ աչքերը էլի յառանայում էին Նեխլիւդօվի կողքովը:

